Azg
armenian daily
3 ՓԵՏՐՈՒԱՐ 2004 ԵՐԵՔՇԱԲԹԻ 16 (294)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ
ՀԱՄԱՐ

Ռուսաստանը դադարեցրեց հացահատիկի արտահանումը

Ռուսաստանի կառավարությունը երեկ արգելեց երկրի հացահատիկի արտահանումը: Պատճառը երկրում ստեղծված վիճակն է այդ բնագավառում: Մի կողմից՝ ռուսական հացահատիկի էժան լինելու պատճառով այն մեծ ֆանակությամբ եվրոպական շուկաներում վերավաճառելու իրողությունն է, մյուս կողմից՝ այս տարվա բերքի պակասը: Ահա թե ինչու Ռուսաստանի բազմաթիվ շրջաններում հացը բանկացել է վերջին շրջանում, տեղ-տեղ վաճառվելով կրկնակի թանկ: Այս մասին կառավարության անդամներին առավոտյան զգուշացրել էր նախագահ Վլադիմիր Պուտինը՝ պահանջելով ուժեղացնել վերահսկողությունը հացի շուկայում եւ, մյուս կողմից, հացահատիկի ատարեգում պետական ինտերվենցիաներ կատարել: Երեկոյան արդեն գյուղմթերումների գծով փոխվարչապետ Ալեքսեյ Գորդեեւը ՕՊՏ հեռուստատեսությամբ հայտարարեց, թե հունվարի 15-ից սկսած գործնականում դադարեցվել է հացահատիկի արտահանումը:

Պետք է ակնկալել, որ Ռուսաստանի կառավարության որոշումն իր բացասական ազդեցությունը կունենա հայաստանյան շուկայում՝ նկատի ունենալով, որ այդ երկիրն է մեր հացահատիկի գլխավոր մատակարարը:

Հայաստանում սկսվել է փետրվարյան «հեղափոխություն»

Ռոբերտ Քոչարյանը մեկնեց արշակուրդ

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Եվ այսպես, հերթական անգամ հայրենական ընդդիմությունը ծեռնամուխ է եղել տարիների չիրականացված երազանքի իրագործմանը՝ իշխանությունից հեռացնել Ռոբերտ Քոչարյանին եւ նախագահի փոխարեն իշխանության բերել «իրենց»:

Ակնհայտորեն ընդդիմությունը ոգեւորված է հարեւան հանրապետությունում իրականացված այսպես կոչված «վարդյա» կամ «թավշյա» հեղափոխությամբ, եւ դատելով ընդդիմադիր գործիչների հայտարարություններից, փորձելու է ընտրել եւ կյանքի կոչել իշխանափոխության այն տարբերակը, որին հետեւեցին Միխայիլ Սաակաշվիլին, Նինո Բուրջանաձեն եւ Զուրաբ Ժվանիան:

Մոտ մեկ շաբաթ առաջ ՍԻՄ-ի «Ազդակ» ակումբի հյուրը Ռոբերտ Քոչարյանի նախկին խորհրդական եւ ջերմեռանդ պաշտպան Արամ Գասպարի Սարգսյանը, շրջանառության մեջ դրեց մինչ այդ հայ քաղաքական բառապաշարում հազվադեպ հանդիպող արտահայտություն՝ «քաղաքացիական անհնազանդություն»: Այս բառակապակցությունը, ըստ ամենայնի, վերցված է Սաակաշվիլուց: Բատոնո Միշան վրացական հեղափոխությունից ընդամենը մի քանի օր առաջ շրջանառության մեջ դրեց այս «անհնազանդությունը»:

Ռոբերտ Քոչարյանի նախկին մեկ այլ ջերմեռանդ պաշտպան Ալբերտ Բազեյանը «Ռեգնում» գործակալությանը տված հարցազրույցում՝ շեշտելով «քաղաքացիական անհնազանդություն» կապակցությունը, նշել է, որ «այսուհետեւ հանրահավաքներ չեն լինի, կլինեն իրական գործողություններ. մենք ժողովրդին ոտքի ենք հանելու, շրջափակում նախագահի նստավայրը, շրջափակում խորհրդարանի շենքը, ժողովրդին կոչ անում քաղաքացիական անհնազանդության եւ պահանջում Քոչարյանի հրաժարականը»:

Տես էջ 2

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Հանրաքվեի ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու օրենքի նախագիծը չընդունվեց

Ազգային ժողովի գարնանային նստաշրջանի առաջին ուշագրավ իրադարձությունը՝ ընդդիմությունը եռօրյային հաջորդող ընթացքին կմասնակցի միայն հարց ու պատասխանի եւ հայտարարությունների ժամանակ՝ այն էլ ամբիոնն օգտագործելու համար: Պատճառը «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու օրենքի նախագիծն Ազգային ժողովի օրակարգում չընդգրկելն է:

Հարցի քվեարկության հետ համատեղ ընդդիմությունը հրապարակավ լքեց նիստերի դահլիճը: Իսկ մինչ այդ Գասպարյանն այս խնդրում կարեւոր չհամարելով իրավական դաշտը, հորդորեց ուշադիր լինել քաղաքական դաշտի պահանջներին եւ չմոռանալ, որ այդ դաշտում քաղաք է տիրում, եւ անհրաժեշտ է հանրաքվեի օրենքում փոփոխություններն ու լրացումները շուտափույթ կատարել: Արտաքս Գեղամյանն էլ Ռոբերտ Քոչարյան եւ Սերժ Սարգսյան զույգի իշխանավարության ընթացքն ավարտված համարելով՝ հայտարարեց, թե նշված զույգը միտումնավոր աղակայունացման է տանում երկիրը: Վիկտոր Դալլաքյանն էլ, լրացնելով ասվածը, ընդգծեց, որ իրենք դեմ են կայուն բռնապետությանը եւ դրական են վերաբերվում սահմանադրության ընձեռած իրավական ճանապարհով խնդրի լուծումն ստանալուն: Այլ ելքի դեպքում պրն Դալլաքյանը համապատասխան քայլեր է ենթադրում: Ոստանիկ Մարուխյանի փաստաբաներով էլ հանրաքվեի օրենքում այժմ փոփոխություններ կատարելը սահմանադրության հետ որոշակի հակասությունների կբերի: Ի վերջո, հանրաքվեի ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու նախագիծը չընդունվեց: Քվեարկության ընթացքում ստացվեց 5 կողմ, որից 2-ն ընթացքում հրաժարվեցին իրենց կողմնորոշումից, իսկ ընդդիմությունն ընդհանրապես չմասնակցեց քվեարկությանը:

Ն. Պ.

Ավտովթարից տուժել է Պոլսո հայոց պատրիարքը

Կիրակի օրն Անթալիայում Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Մութաֆյանը ենթարկվել է ճանապարհային պատահարի, որի հետեւանքով ստացել է ոտքի եւ քթի կոտրվածքներ: Պոլսում լույս տեսնող «Ժամանակ» օրաթերթի թղթակից Սեւան Դեյրմենջյանն «Ազգին» տեղեկացրեց, որ թեթեւ վնասվածքներ են ստացել նաեւ պատրիարք հորն ուղեկցողներից կրոնական ժողովի փոխատենապետ Սահակ աբեղա Մաշալյանը, պատրիարքարանի մամլո բանբեր Լուիզ Բաքարը, լուսանկարիչ Մանվել Ջիթակը, Հովհաննես Բայրամը եւ երիտասարդաց հանձնախմբի 7 անդամներ:

Թռչնագրիպի առաջին դեպքը Եվրոպայում

ՓԱՐԻԶ, 2 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Եվրոպայում հայտնաբերվել է «թռչնագրիպով» հիվանդանալու առաջին դեպքը: Առողջապահության համաշխարհային կազմակերպության տեղեկատվության համաձայն, Համբուրգում ծանր վիճակում հիվանդանոց է տեղափոխվել մի կին՝ օրգանիզմում «թռչնագրիպի» վիրուսի առկայության նշաններով: Այդ կինը վերջերս է վերադարձել Թաիլանդից:

Հայտնի է դարձել, որ «թռչնագրիպի» կասկածանքով հիվանդանոց է տեղափոխվել նաեւ նրա ընկերուհին: Վերջին հետազոտությունները ցույց են տալիս, որ «թռչնագրիպի» վիրուսը հնարավոր է՝ սկսել է մարդուց փոխանցվել մարդուն:

Իրանցի 125 պատգամավորներ վայր դրեցին մանդատները

Իրանի խորհրդարանի 125 անդամներ երեկ գրավոր հրաժարական ներկայացրին: Նրանց մեծ մասն անդամ է «Իրանի մասնակցության ճակատ» կազմակերպությանը, որի ղեկավար Մոհամմադ Ռեզա Խաթամին հարազատ եղբայրը երկրի նախագահի, հրաժարականները ներկայացնելուց հետո տված մամլո ասուլիսում հայտարարեց, որ կազմակերպությունը չի մասնակցելու առաջիկա փետրվարի 20-ի խորհրդարանական ընտրություններին եւ փոխարենը պահանջում է անցկացնել հանրաքվե երկրի ապագայի շուրջ: Մոհամմադ Ռեզա Խաթամիի գլխավորած կազմակերպությունը համարվում է Իրանում բարենորոգչական շարժման ավանգարդ: Հրաժարականների եւ ընտրություններին չմասնակցելու շարժառիթը Իրանի Պահապանների գերագույն խորհրդի վերջերս կայացրած որոշումն է՝ առաջիկա ընտրություններին 2000 թեկնածուների մասնակցությունն արգելելու մասին:

Վրաստանում վերականգնվում է վարչապետի պաշտոնը, որը կզբաղեցնի Զուրաբ Ժվանիան

ԹԲԻԼԻՍԻ, 2 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Վարչապետի պաշտոնի վերականգնումից հետո այն կզբաղեցնի Զուրաբ Ժվանիան: Այդ մասին կիրակի օրը հայտնել է Վրաստանի նախագահ Միխայիլ Սաակաշվիլին: Նա լրագրողներին ասել է, որ «տվյալ փուլում ինքը նպատակահարմար է համարում վարչապետ նշանակել Ժվանիային»: Նրա խոսքով, «վարչապետի պաշտոնի վերականգնման եւ սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու հարցը խորհրդարանի կողմից կքննարկվի այս շաբաթ»: Նախագահը նշել է, որ «անհրաժեշտ է ըստ կարելվույն արագ ավարտել կառավարության նոր կազմի համալրման գործընթացը երկրի առջեւ ծառացած բազմաթիվ խնդիրները լուծելու համար»:

Ռուսաստանը հնարավոր է համարում Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ բլոկի շահագործումը

Ռուսաստանի փոխվարչապետ, հայ-ռուսական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Բորիս Ալյոշինը երեկ նախագահ Պուտինին զեկուցել է, որ Հայաստանը Ռուսաստանին է հանձնել Հրազդանի ՋԷԿ-ը պարտք գույքի դիմաց ծրագրի շրջանակներում:

«Հրազդանի ՋԷԿ-ի բոլոր 4 բլոկներն աշխատանքային վիճակում են, մոտ ժամանակներում էլեկտրաէներգիա կարող է առաքվել Վրաստան», Պուտինին տեղեկացրել է Ալյոշինը, հավելելով, որ Վրաստանի, Իրանի, Թուրքիայի եւ Հայաստանի էլեկտրաէներգիայի ամբողջ դեֆիցիտը հնարավոր է ծածկել Հրազդանի ՋԷԿ-ի միջոցով:

«Ամբողջությամբ դժվար թե», կասկածել է նախագահ Պուտինը: Ալյոշինը, ինչպես հաղորդում է «Նովոստի» գործակալությունը, նշել է, որ հնարավորություններ կան ավարտին հասցնելու Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ բլոկի կառուցումը:

Ալյոշինը հաղորդել է նաեւ, որ Հայաստան այցի շրջանակներում այցելել է բոլոր 5 գործարանները, որոնք հանձնվել են Ռուսաստանին: «Բոլոր ձեռնարկությունները գործում են», ասել է նա:

Հայաստանի Ռուսաստանին ունեցած մոտ 100 մլն դոլար պարտքը մարվել է «Մարս» ՓԲԸ, Մաթեմատիկական մեքենաներ ԳՀԻ, Ավտոմատ կառավարման համակարգերի ԳՀԻ, Նյութաբանության ինստիտուտ եւ Հրազդանի ՋԷԿ ձեռնարկությունները Ռուսաստանին հանձնելով:



ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Առողջապահության ոլորտում կոտրած չի սպասվում

Օպտիմալացման նպատակը կրճատումները չեն, հավատացնում է քաղաքապետարանի առողջապահության ու սոցիալական ապահովության վարչության պետը

Համաշխարհային բանկը 20 մլն դոլարի վարկ է նախատեսել առողջապահության օպտիմալացման ծրագրի իրականացման համար: Դեռևս 2000, 2001 թթ. միջազգային փորձագետներն արդեն սկսել էին քննել ոլորտը, եւ օպտիմալացման առաջարկը հենվեց նրանց ուսումնասիրությունների վրա: Քաղաքապետարանի երեկվա ճեպազրույցը լրագրողների հետ կրկին անդրադարձ էր մայրաքաղաքում վարչության պետի հավաստիացումով, հիմնականում վարչական ու տնտեսական աղարտի աշխատողներ են: Մասնագիտական բարձր մակարդակով թոշակառու կադրերի համար բացառություններ կլինեն, քանի որ ամենեւին մտադիր չեն ամայացնել ոլորտը: Այնուամենայնիվ, Արմեն Սողոյանը խոստովանեց, որ աշխատողների մասնագիտական մակարդակները տարբերակելու չափանիշներ այսօր չեն գործում: Աղագայում ենթադրվում է վերականգնել բժիշկների որակավորման ինստիտուտը, իսկ այժմ, ինչպես ուսուցիչների պարագայում, կրճատումների խնդիրը լուծելու են տնօրենները ու գլխավոր բժիշկները:

Առայժմ առողջապահական հաստատություններից վդոդվմունի ու իրականացման աղմուկ չի լսվում, ինչը վկայում է վիրահատական անցավ գործողությունների մասին: Ինչ վերաբերում է ազատված շենքերին, ապա դրանք հանձնվելու են պետական գույքի կառավարման վարչությանը:

Իսկ այս պահին քաղաքապետարանի ենթակայության տակ 4 բազմապրոֆիլ կառույցներ են ձեւավորվում: Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոնում միավորվել են Շտաղ օգնության գիտաբժշկական միավորումը, թիվ 4 կլինիկական ծննդատունը, թիվ 14 պոլիկլինիկան, թիվ 5 մանկական եւ թիվ 6 մանկական նյարդաբանական հիվանդանոցները: Քանաքեռ-Զեյթուն բժշկական կենտրոնը միավորելու է Ուրսաբանության գիտահետազոտական ինստիտուտը, թիվ 8 բուժմիավորումը, «Զեյթուն» բժշկական կենտրոնը, Հիգիենիկ եւ պրոֆեսիոնալ հիվանդությունների ինստիտուտը, «Արաբկիր» մանկական, թիվ 11 եւ թիվ 16 պոլիկլինիկաները: Գրիգոր Նարեկացի բժշկական կենտրոնը ձեւավորվում է թիվ 1 ծննդատան, թիվ 2 , թիվ 10 եւ Նուբարաշենի պոլիկլինիկաների միավորումից: Սուրբ Աստվածածայր կենտրոնի մեջ կմտնեն նույնանուն ծննդատունը, Շտաղ օգնության մանկական կլինիկական հիվանդանոցը, 6-րդ բուժմիավորումը, թիվ 9 եւ թիվ 18 պոլիկլինիկաների միաձուլումից: Բացի սրանցից, մայրաքաղաքում կգործեն 20 անկախ պոլիկլինիկաներ եւս: Սպասվում է, որ նորաստեղծ կազմակերպությունները կգրանցվեն մյուս շաբաթ:



Օպտիմալացումը միակ ծրագիրը չէ, որ մտադիր է ֆինանսավորել Համաշխարհային բանկը: Քննարկումների փուլում է վարկային նոր ծրագիրը, որը նախատեսում է տեղամասային թերապեւտների եւ մանկաբույժների վերապրոֆիլավորում: Նպատակը ընտանեկան բժիշկների հանգրվանին հասնելն է, որը թերեւս միակ մասնագիտությունն է, որ կադրային քաղց կա, եւ որը հավակնում է դառնալ առաջատար: Ընտանեկան բժիշկները փոխարինելու են պոլիկլինիկաների տեղամասային թերապեւտներին ու մանկաբույժներին, եւ ընդհանրապես կմտցնեն առաջնային օղակի ու նեղ մասնագիտական բոլոր տեսակի ծառայություններ: Վարչության պետը կարծում է, որ դա հնարավոր է իրականացնել առաջիկա 5-6 տարիների ընթացքում:

ԿԱՐԻՆԵ ԳԱՆԻԵԼՅԱՆ

ԼՂՀ. Ցուցանիշները հիմնականում աճել են

ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությունը հրապարակել է հանրապետության արդյունաբերության եւ կապիտալ շինարարության աճը 2003 թ.: Համաձայն այդ տվյալների, արդյունաբերության ոլորտում 2003 թ. համադրելի գներով բողարկվել է 11287.0 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, որը 2002 թ. նկատմամբ կազմել է 138.6 տոկոս: Ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի կառուցվածքում 65.9 տոկոսը կամ 7436.5 մլն դրամը կազմել է «Վերամշակող արդյունաբերությունը», իսկ 9.6 տոկոսը կամ 1084.4 մլն դրամը՝ հանրապետությունում նոր ստեղծված «Հանքագործական արդյունաբերությունը»: Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում պետական եւ ոչ պետական հատվածների կազմակերպությունների բողարկած արտադրանքի տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար՝ 32.9 եւ 67.1 տոկոս: Արդյունաբերական արտադրանքի արտադրության ծավալն ըստ շրջանների կազմել է. Ստեփանակերտ քաղաքում՝ 7266.4 մլն դրամ (117.5 տոկոս), Ասկերանի շրջանում՝ 884.5 մլն դրամ (121.5 տոկոս), Հադրութում՝ 48.3 մլն դրամ (79.2 տոկոս), Մարտակերտում՝ 1166.0 մլն դրամ (5.2 անգամ), Մարտունիում՝ 1471.8 մլն դրամ (2.6 անգամ), Շուշիում՝ 55.9 մլն դրամ (140.3 տոկոս), եւ Քաշաթաղում՝ 394.1 մլն դրամ (115.2 տոկոս):

Արդյունաբերաարտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը կազմել է 3465 մարդ եւ 2002 թ. համեմատ ավելացել է 352 մարդով կամ 11.3 տոկոսով: Մեկ աշխատողի արտադրած արտադրանքը կազմել է 3257.4 հազ. դրամ կամ 2002թ. համեմատ աճել է 24.5 տոկոսով:

Շինարարության ոլորտում եւս աճն առկա է: Այսպես, 2003 թ. հանրապետությունում իրականացվել է 8375.2 մլն դրամի կապիտալ շինարարություն, որը 2002 թ. համեմատ կազմել է 124.4 տոկոս կամ ավելացել է 1640.8 մլն դրամով: Իրականացված կապիտալ շինարարությունը 2002 թ. համեմատ, ըստ ֆինանսավորման աղբյուրների, կազմել է՝ ԼՂՀ պետբյուջեի՝ 140.7 տոկոս, համայնքների՝ 121.9 տոկոս, Քաշաթաղի շրջանի բյուջեի՝ 100.0 տոկոս, օտարերկրյա ներդնողների՝ 169.4 տոկոս, մարդասիրական օգնության՝ 112.8 տոկոս, կազմակերպությունների՝ 101.1 տոկոս, արտաբյուջետային՝ 63.4 տոկոս, բնակչության միջոցների հաշվին՝ 41.6 տոկոս:

Աճի այս դինամիկայի պահպանման դեպքում, մասնագետների համոզմամբ, 2004 թ. արդյունաբերության եւ շինարարության ոլորտներում դրական արձանագրումներն ավելի շոշափելի կլինեն:

Կ. ԳԱՐԲԻԵԼՅԱՆ

Ստեփանակերտ

ՀԱԿԻՐՄ

Եվս 24 գործազուրկ՝ այս անգամ հանրային ռադիոյից

Հանրային ռադիոյի տնօրեն Արմեն Ամիրյանը անցած շաբաթավերջն ազատեց 2 տասնյակ աշխատողների կրճատումներով: Որպես կանոն սրանք միջին տարիքի լրագրողներ են, որոնց պրոֆեսիոնալիզմը, հայ լրագրության ներկա մոդայիկ ընկալումների համաձայն, տարիների հետ ավելի ու ավելի կասկածելի է դառնում: Աշխատանքային հին օրենսգիրքը չի գործում, նորը չկա, արհմիությունները չեն էլ փորձում կայանալ, այնպես որ երկուշաբթին գործազրկությամբ դիմավորած լրագրողների իրենց իրավունքների համար պաշտպանության դաշտն այնքան էլ մեծ չէ:

Գ. Գ.

Դժբախտ դեպք Գյումրիում

Հունվարի 29-ին Գյումրու Մսի կոմբինատ թաղամասի չգործող ակումբի շենքից 42-ամյա Ավետիք Հովհաննիսյանի գլխին է ընկել 36 մմ տրամաչափի, 8 մետր երկարությամբ ջրահեռացման խողովակը: Տուժածին, գլխի կոտրվածքով, տեղափոխել են Գյումրու Գյուլբենկյանի անվան հիվանդանոց, որտեղ եւ նա մահացել է, տեղեկացանք արտակարգ իրավիճակների վարչության լրատվության կենտրոնից:

Գյումրեցիների հավաստմամբ, խողովակը ծանրացել է սառույցից եւ պոկվել՝ մահացու հարված հասցնելով պատահական անցորդին:

Հայաստանում սկսվել է փետրվարյան «հեղափոխություն»

Մնացածը՝ էջ 1

Եթե պրն Բագեյանի՝ Քոչարյանին իշխանությունից հեռացնելու ծրագիրը Վրաստանից չի վերցված, ապա, միեւնույն է, կես առ կես համընկնում է Սակաշվիլու գործողությունների հաջորդականությանը: Նրանք, ովքեր հետեւել են Վրաստանի նոյեմբերյան հեղափոխությանը, ինչը կարելի է պետական հեղաշրջում որակել, հիշում են, որ՝

ա) Սակաշվիլին ժողովրդին ոտքի հանեց,

բ) շրջափակեց նախագահի նստավայրը,

գ) շրջափակեց խորհրդարանի շենքը,

դ) ժողովրդին կոչ արեց քաղաքացիական անհնազանդության,

ե) պահանջեց Շեւարդնաձեի հրաժարականը:

Մյուս կողմից՝ եթե Հայաստանի ընդդիմությունը փորձում է վրացական օրինակով տապալել Քոչարյանին, ապա ժամանակացույցի առումով թույլ է տալիս լուրջ սխալներ: Սակաշվիլին վերոնշյալ գործողություններին ձեռնամուխ եղավ իշխանափոխությունից ընդամենը մեկ շաբաթ առաջ, երբ Շեւարդնաձեի հրաժարականն առավել իրական էր թվում: Իսկ միգուցե մինչեւ փետրվարի 10-ը իշխանության կգան մե՞ր «վրացիները»:

Իշխանափոխության կամ հեղափոխության հոտը Հայաստանում չի զգացվում: Իշխանությունից Քոչարյանին հեռացնելու նախադրյալներ չկան նաեւ առաջիկայում: Խոսքն այն մասին չէ՝ Հայաստանի գործող նախագահը լա՞վն է, թե՞ վատը: Պարզապես մեր երկրում, մեր ընդդիմության մեջ չկա Սակաշվիլու նման խարիզմատիկ առաջնորդ:

Հա՛րց: Ո՞վ կամ ովքե՞ր են ժողովրդին հանելու Քոչարյանի դեմ, ինչպես Սակաշվիլին արեց Վրաստանում: Ստեփան Դեմիրճյա՞նը: Պրն Դեմիրճյանը քաղաքական ասպարեզ բերվեց հոր՝ ոճրագործությանը զոհ դարձած Կարեն Դեմիրճյանից հետո: ՀԺԿ-ի առաջնորդը պատմական հնարավորություն էր ստացել դառնալու Հայաստանի առաջնորդ, սակայն տասնյակ հազար մարդկանց վստահությունը, ովքեր նախագահական ընտրություններից հետո դուրս էին եկել փողոց, չկարողացավ ճիշտ օգտագործել: Վազգեն Մանուկյանի փորձով կարող ենք ենթադրել, որ Դեմիրճյանն այլեւս չի կարող դասվել Հայաստանի ապագա նախագահի հավանական թեկնածուների շարքում:

Այսօրվա ընդդիմադիր դաշտում մնացած գործիչներից կարո՞ղ եք նշել մեկին, ով ունի, ասենք, Նինո Բուրջանաձեի տղամարդկությունը: Ո՞վ է կամ ովքե՞ր են այն ընդդիմադիր գործիչները, ովքեր ընդունակ կլինեն փողոց հանել Քոչարյանին չընդունող զանգվածին: Պատկերացնո՞ւմ եք խորհրդարանի շենքը շրջափակած երիտասարդ կանանց, ովքեր երեխաներին գրկած պահանջում են Քոչարյանի հրաժարականը կամ նրա փոխարեն, օրինակ, երկրի ղեկավար տեսնում Հմայակ Հովհաննիսյանին, Արամ Սարգսյանին կամ Ալբերտ Բազեյանին, կամ էլ այսօրվա ընդդիմադիր գործիչներից յուրաքանչյուրին, անգամ՝ Պարույր Հայրիկյանին: Սակաշվիլու համար փողոց դուրս էին եկել:

Վրաստանում ժողովուրդը ոչ միայն պահանջում էր Շեւարդնաձեի հրաժարականը, այլեւ նրա փոխարեն տեսնում մեկ այլ առաջնորդի, տվյալ դեպքում՝ Սակաշվիլուն, ով կարող էր փոխել իրենց կյանքը: Մինչդեռ մեր ընդդիմությունը չափազանց պարզունակ բան է առաջարկում. ժողովո՛ւրդ, դուրս եկեք, ձեր օգնությամբ տապալենք Քոչարյանին, որպեսզի նրա փոխարեն մենք դառնանք իշխանություն:

Լուրջ չէ: Ավելին՝ տխուր է: Մենք ունենք մի ընդդիմություն, ավելի ճիշտ՝ ընդդիմադիր կոչված գործիչների մի խումբ, ովքեր ժամանակին եղել են իշխանություն (Բագեյան, Արամ Զավենի Սարգսյան, Արամ Գասպարի Սարգսյան, Վազգեն Մանուկյան եւ այլն), ատամներով պաշտպանել են Քոչարյանին (Հմայակ Հովհաննիսյան, Պարույր Հայրիկյան եւ այլն), օգտագործվել են Քոչարյանի կողմից եւ Քոչարյանի համար: ՀՀՇ-ի մասին չենք խոսում, քանի որ դա քաղաքական անախրոնիզմի ոլորտից է:

Վրացական ընդդիմությունը, ի տարբերություն մեր ընդդիմության, Արեւմուտքի (ԱՄՆ) համար լուրջ տպավորություն էր թողնում: Հետեւաբար՝ Արեւմուտքում գտնվեցին պետություններ, անհատներ, ովքեր խաղադրույք դրեցին: Շավարշ Քոչարյանի եւ նրա ընկերների վրա խաղադրույք չեն դնի, մանավանդ այն դեպքում, երբ նույն Արեւմուտքի համար Հայաստանի նախագահն առայժմ միչ թե շատ ընդունելի դեմք է: Սակաշվիլու, Ժվանիայի, Բուրջանաձեի թիմը հրաժարվեց պատգամավորի մանդատից, մինչդեռ մեր ընդդիմությունը ամահած օրհորդի նման համաձայնեց եւ խորհրդարան գնաց: Ու բոլորովին էլ կարեւոր չէ, թե «Արդարությունը», ի դեմս Շավարշ Քոչարյանի, ինչպես է «լացում» Ստրասբուրգում: Եվրախորհուրդը, անշուշտ, կօգտագործի այս «լացը», բայց ոչ թե ընդդիմությանն իշխանության բերելու, այլեւ Հայաստանի վրա հավելյալ ճնշումներ բանեցնելու համար:

Երեկոյան ՀՀ նախագահի մամլո գրասենյակը տեղեկացրեց, որ Ռոբերտ Քոչարյանը մեկնել է կարճատեւ հանգստի, որը կանցկացնի Հայաստանում:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 04 տարի
Պետական եւ հասարակական
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թաղ. 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենյակ
/ հեռ. 581841
Համակարգ. ծառայություն
/ հեռ. 582483
Apple Macintosh
հանձնարարական շարուածք
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի անթողարկելի թէ մասնակի արտատպումները տրագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռարձակութեամբ, ա ռանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

Ընթացիկ

«Ազգի» ընթերցողներին տեղեկացրել ենք, որ 2002 թ. Միգրացիայի միջազգային կազմակերպության գրասենյակը, Թուրքմենստանի եւ Հայաստանի իշխանությունների հետ սերտ համագործակցությամբ եւ Նիդեռլանդների կառավարության ու Ազգաբաղում Մեծ Բրիտանիայի դեսպանության ֆինանսավորմամբ շարունակում է Թուրքմենստանից հայաստանցի միգրանտների վերադարձի գործընթացը: Երկու տարի առաջ

ՎԵՐԱԴԱՐՁ ԹՈՒՐՔՄԵՆԻԱՅԻՑ

Հայկական ճակատագրեր

Թուրքմենստանի կառավարությունը մտցրել է անձնագրային խիստ ռեժիմ, որն էլ խախտողները պարտավոր են վճարել բարձր չափի տուգանքներ եւ որոշակի ժամանակահատվածում թողնել երկիրը: Այդ օրենքը բացասական ազդեցություն է ունեցել հատկապես հայերի վրա, որոնք անօրինական ապրել եւ աշխատել են Թուրքմենստանի տարածքում: Թուրքմենստանում ՀՀ դեսպանության խորհրդական Գարիկ Իսրայելյանը նշեց, որ «ելնելով ներկա տնտեսական, որոշ առումով նաեւ քաղաքական պայմաններից, հայկական համայնքը հետզհետե նոսրանում է եւ մոտավոր հաշվարկով այսօր 25.000 է»:

Շաբաթ՝ լույս կիրակի առավոտյան «Զվարթնոց» օդանավակայանում տեղափոխվողներին դիմավորում էին ՄՄԿ երեւանյան գրասենյակի ղեկավար Մարտին Անդրեաս Վիիսը, շահագրգիռ պետական մարմիններ եւ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ, լրագրողներ: Միջազգային միգրացիայի երեւանյան գրասենյակի աշխատակիցները նրանց ուղեկցեցին Արգնի, Ջերմուկ, Աբովյան, Դիլիջան, Վանաձոր, Գորիս եւ Սիսիան, որտեղից նրանք մեկնել էին տարիներ առաջ: Ես փորձեցի զրուցել նրանցից մի քանիսի հետ եւ ճշտել, թե ինչո՞ւ են մեկնել, որտե՞ղ են վաստակել օտար երկրում եւ այլն:

Յուրի Ալեքսանյան, *63 տարեկան*: 12 տարի առաջ հեռացել է Զանգեզուրից եւ հաստատվել Ազգաբաղում: Շինարարի մասնագիտությամբ նա օտար ափերում, սկզբում մենակ, ապա ընտանիքով հաստատվում է եւ վաստակում ամսական 800-1200 ԱՄՆ դոլար: Նրա միակ որդին՝ Արգամը, 4 տարի մասնակցելով Ղարաբաղի ազատագրական կռվին, նույնպես տեղափոխվում է հոր մոտ: Իսկ իմ այն հարցին, թե արդյոք կմնա՞ն Հայաստանում, Յուրի Ալեքսանյանը պատասխանեց. «Սեւ աչքերից պրծանք, հիմա սպիտակ աչքերի մոտ կգնանք աշխատելու: Ռուսաստան, եթե Հայաստանում աշխատանք չճարենք»:

Խաչատուր Եսայան, *43 տ.*: 5 տարի առաջ թողել է ընտանիքը՝ կնոջն ու երկու զավակներին, մեկնել աշխատելու որպես դարբին: Անձնագրային ռեժիմ մտցնելուց հետո նրան նույնպես կեցության իրավունք չեն տվել, ուստի ստիպված դիմել է դեսպանատուն, որ իրեն հետ բերեն հայրենիք: Սակայն նա մտադրված է մի քիչ մնալ հայրենի տանը՝ Գորիսում, ու նորից մեկնել աշխատելու, այս անգամ Ռուսաստան:

Նարինե Աղաջանյան, *43 տ.*: Ծնվել է Ազգաբաղում, ավարտել է տեղի բանասիրական ֆակուլտետը: ՀՀ անկախության հռչակումից հետո 1990 թ.-ին ընտանիքով տեղափոխվել է Գորիս, ուր 4 տարի աշխատել է Գորիսի ժողկրթբաժնում որպես մեթոդիստ, ապա տեսուչ: Ինչ-ինչ պատճառներով կրճատման տակ է ընկել ու կորցրել աշխատանքը: Աշխատանքի բազմաթիվ փնտրտուքները արդյունք են անցել, եւ նա ստիպված իր երկու զավակների (16 եւ 18) հետ կրկին մեկնում է Ազգաբաղ, աշխատանք գտնում եւ վաստակելով ամսական 500 ԱՄՆ դոլար միջին աշխատավարձ, շատ լավ արել է ու դեռ օգնել հարազատներին: Վերադարձել է նոր փաստաթղթեր հանելու, քանի որ հին անձնագրերը չեն ընդունում ոչ մի երկրում: Նարինեն հուսով է, որ եթե Գորիսի իշխանությունները նրան աշխատանքով ապահովեն, ապա չի մեկնի Գորիսից: Իսկ նրա 16-ամյա դուստր Անժելան հայերեն գրել-կարդալ չգիտեր եւ իր համար մեկ է, որտեղ ծնողները որոշեն մնալ, այնտեղ էլ կմնա:

Թամար Սարգսյան *71 տ.*: 1998 թ.-ից մեկնել է Ազգաբաղ երբեմն մոտ, իսկ այժմ վերադարձել է Հայաստան, որ իր թոռակի ու անձնագրի հարցերը լուծի: Ծնվելով ԼՂՀ Մարտունու շրջանի Կաղարծին գյուղում, ամուսնացել եւ տեղափոխվել է Բաքու: 1989 թ.-ին Բաքվից փախչելով՝ հաստատվել է Արգնիում: Իսկ այժմ կորոշի, թե ինչ է անելու, կմնա՞ Արգնիում, թե՞ կմեկնի Ռուսաստան՝ իր միակ որդու մոտ: Փախստականի կարգավիճակով Թուրքմենստանում մնալ չէր կարող եւ դիմել է դեսպանատուն ու ՄՄԿ-ին, որոնց աջակցությամբ էլ վերադարձել է Երեւան:

Ջեմմա Դասաբյան, *47 տ.*, Վանաձորից: Ունենալով բուժքրոջ մասնագիտություն, թողնում է ընտանիքը եւ ամուսնու հետ մեկնում Թուրքմենստան: Ամուսինն աշխատելով շինարարական տեսքում, ամիսը վաստակում է 150-200 ԱՄՆ դոլար, որն էլ լիուլի բավարարել է իրենց: Այժմ նրանք իրենց երկու զավակների հետ են, որոնք այս օգնության ծրագրի առաջին խմբով արդեն վերադարձել են Հայաստան: Իսկ այժմ ամուսիններն են վերադարձել, ու ամբողջ օգտագործելով հատուկ շնորհակալություն են հայտնում այն բոլոր կազմակերպություններին, որոնք օգնեցին վերջապես ընտանիքին վերադառնալ մայր հայրենիք: Նրանց որդին արդեն ծառայում է Վայքի զորամասում, իսկ իրենք պարելու են Վանաձորի իրենց տանը եւ այլեւս ոչ մի տեղ չեն մեկնելու...

Սամվել Շահնազարյանը Աբովյանից մեկնում է շինարարական մի կազմակերպության հրավերով՝ պայմանագրային աշխատանքի: Սակայն 1999 թ., այդ կազմակերպության գլխ. տնօրենի մահվանից հետո, կազմակերպությունը լուծարվում է, եւ աշխատողները մնում են առանց աշխատանքի: Էլեկտրիկ-մեխանիկի եւ փականագործի մասնագիտությունը նրան հնարավորություն է տալիս հեշտությամբ աշխատանք գտնել, ամուսնանալ եւ այժմ ունի երկու երեխա: Երբ երեխան դառնում է 7 տարեկան, բազմաթիվ պրոբլեմներ են առաջանում 1-ին դասարան ընդունվելու հարցում: Մի կերպ ծանոթների օգնությամբ տեղավորում են, սակայն 4 ամիս անընդհատ 1-ին դասարանցուն դասերի ժամանակ ստիպում են պարտադիր ուսանել «Ռուխնամա» գիրքը, որը գրել է Թուրքմենբաշին, մի բան, որը շատ տարօրինակ ու անհասկանալի է հայ երեխայի համար: Անճարությունից դիմում են դեսպանատուն՝ Հայաստան վերադառնալու խնդրանքով: Այժմ նրանք Հայաստանում են, սակայն անորոշ է նրանց ճակատագիրը, քանզի չունեն ոչ աշխատանք, ոչ բնակարան եւ ոչ էլ հարազատներ, որոնք առաջին պահին ձեռք կմեկնեն նրանց:

Որպես ավարտ հիշեցնեմ, որ բոլոր վերադարձողներն օդանավակայանում ստացան 100 ԱՄՆ դոլար նպաստ եւ 50 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր երեխայի համար: Սակայն որքան կբավարարի այդ գումարն ընտանիքներին մինչեւ աշխատանք գտնեն, մնում է հարցերի հարցը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆՈՒԱՐՅԱՆ

Ստրասբուրգում հայկական պատվիրակության պառակտում չի եղել

Գրանցել ենք հնարավոր բարշր արդյունք...

Ազգային ժողովի փոխնախագահ, Եվրախորհրդի հայաստանյան պատվիրակության նախագահ Տիգրան Թորոսյանը հրավիրած ասուլիսին ներկայացավ մենակ եւ հավաստիացրեց, որ պատվիրակության մյուս անդամների բացակայությունը բոլորովին էլ պառակտման ապացույց չէ: Ըստ որմ Թորոսյանի, պառակտման մասին խոսք անգամ լինել չէր կարող, քանի որ պատվիրակությունում ընդգրկված ընդդիմադիրների ներկայացնելիք երեք առաջարկներն էլ դեռ Երեւանում հայտնի էին: Ասենք, որ Եվրախորհրդի կանոնների համաձայն, պատվիրակությունում պետք է ընդգրկվեին եւ ընդդիմադիր, եւ կին ներկայացուցիչներ, ինչը հեռատեսորեն ի կատար է ածել մեր երկիրը: Շեշտելով, որ երկրին առնչվող հարցերում անկախ ամեն ինչից միջազգային կառույցներում ուղղակի անհրաժեշտ է համակարծություն դրսեւորել, բնականաբար, ավելի մեծ արդյունք ապահովելու համար պատվիրակության աշխատանքը Տիգրան Թորոսյանը բարձր գնահատեց եւ վստահեցրեց, որ Հայաստանի պատվիրակությունը Եվրախորհրդում աշխատել է հնարավորին արդյունավետությամբ, հատկապես եթե հաշվի առնելու լինենք, որ Ադրբեջանն ունի 6 քվեարկող պատգամավոր եւ Թուրքիայի մեկ տասնյակից ավելի դաշնակից պատգամավորների խումբ: Հայաստանի պատգամավորները չորսն են, իսկ դաշնակից երկրների Ռուսաստանի, Ուկրաինայի պատգամավորներն ուղղակի խուսանավմամբ բացակա:

Այնուամենայնիվ, պատվիրակությունը կարողացել է ձեռք բերել պատահական դաշնակից՝ Իտալիայի պատվիրակությունը: Ինչեւէ, Հայաստանի պատվիրակության գնահատականով անգամ մեր երկրի դեսպանատների ոչ լավ աշխատանքի առկայությամբ պատվիրակությունն աշխատել է լիարժեք եւ ներկայումս Հայաստանի մասին ԵԽԽՎ զեկույցն անհամեմատ նպաստավոր է, քան, ասենք, վերջնագիր ստացած Ադրբեջանի կամ Ուկրաինայի մասին զեկույցները: Բանախոսի հավաստմամբ, այս փուլում Հայաստանի համար առաջնային կարեւորություն ունի պարտավորությունների կատարումը եւ գիտակցումը, որ ԼՂՀ հարցը Եվրախորհրդում չի լուծվում:

Ինչպես ասուլիսի սկզբում, այնպես էլ ավարտին Տիգրան Թորոսյանն ափսոսանք հայտնեց, որ վերադառնալով Ստրասբուրգից հայրենական լրատվամիջոցներում հայտնաբերել է անիրազեկությունից բխող, մեղմ ասած, անճշտություններ թե պատվիրակության աշխատանքներին, թե Եվրախորհրդի կանոնակարգն ու գործունեությունը լուսաբանելու ընթացքին վերաբերող:

Ն. Պ.

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ՄԵԿՆԱՐԿԵՑ

Աժ հերթական նստաշրջանի սկիզբն ավետվեց Արթուր Բաղդասարյանի ասուլիսով

Նախորդ տարվա վերջին 4 ամիսների ընթացքում օրենսդիր մարմին է ներկայացվել 197 օրենքի նախագիծ, որոնցից 95-ը կառավարության, 102-ը պատգամավորների կողմից: Աժ ընդունել է 103 օրենքի նախագիծ, 41 միջազգային պայմանագիր է կնքել, օտարերկրյա 3 պատշտոնական այցերի արդյունքում ձեռք է բերել 30 պայմանավորվածություն, հանրապետության 20 բնակավայրերում հանդիպումներ են կազմակերպվել բնակչության հետ, ստացել է 3 հազար 64 նամակ եւ պատասխանել դրանց բոլորին, ստեղծվել են Աժ նախագահին առընթեր 9 հանձնաժողովներ, խորհրդարանն ուժեղացրել է իր դիվանագիտական գործունեությունը՝ 40 երկրների հետ ստեղծելով խորհրդարանական-դիվանագիտական կապեր: Մեկ բառով՝ խորհրդարանի աշխատանքը եղել է արդյունավետ:

Այս տվյալների հրապարակմամբ էլ Աժ նախագահ Արթուր Բաղդասարյանն ավետեց նստաշրջանի սկիզբը եւ շարունակելով ասուլիսը, հայտնեց, որ ընտրական օրենսգրքի բարեփոխումներով զբաղվելու է համապատասխան աշխատանքային խումբ: Նախատեսվում է տեղական ինքնակառավարման բարեփոխում, այդ շրջանակում նաեւ Երեւանի մասին հատուկ օրենքի ընդունում: Չնայած բյուջեում նախատեսված չէ խնայողական ավանդների վերադարձը, այնուամենայնիվ, Աժ-ն աշխատելու է այդ ուղղությամբ եւ անելու է հնարավորը: Գործընթաց է տարվելու նաեւ կոռուպցիայի դեմ: Խորհրդարանի նախագահն ընդգծեց հատուկ աշխատանքային խմբերի ստեղծումն ու հստակ աշխատանքային ժամանակացույցի սահմանումը:

Պատասխանելով լրագրողների հարցերին, որն Բաղդասարյանն անդրադարձավ վստահության հանրաքվեին եւ ընդգծեց, որ ընտրությունները ընդամենը մի քանի ամիս առաջ են կայացել, ու ժողովուրդն սպասում է գործնական քայլերի, այլ ոչ իշխանափոխության: Անդրադարձ եղավ նաեւ Եվրախորհրդում Հայաստանի պատվիրակության կատարած աշխատանքին, որը դրական գնահատելով Արթուր Բաղդասարյանը շեշտեց, որ երկրից դուրս ամեն մի կառույցում պետք է հանդես գալ միասնական ծրագրով եւ ափսոսանք հայտնեց, որ տվյալ դեպքում այդպես չի եղել:

Սադրա՞նք, թե՞ պատշտոնանկության պահանջ

Մշակույթի նախարար Թամար Պողոսյանի պատշտոնանկ արվելու մասին տարբեր շրջանակներում պտտվող լուրերն Արթուր Բաղդասարյանը չի հաստատում, փաստելով, որ «Օրինաց երկիր» կուսակցությունն այդ մասին որեւէ պատշտոնական լուր չի ստացել, եւ կուսակցության ղեկավարությանը չի դրվել այդ հարցը: Սակայն, ըստ Արթուր Բաղդասարյանի, մշակույթի նախարարի շուրջ իրականացվող սադրանքների ֆինանսավորող եւ պատվիրատու ուժն ակնհայտ է եւ հասկանալի է, որ նույն այդ ուժը գործում է ոչ միայն նախարարի, այլեւ «Օրինաց երկրի» դեմ: Այդ ուժերի անունը մյուսներին հայտնի դարձնելը պրն Բաղդասարյանը հարմար չհամարեց:

Ազգային ժողովում բուռն քննարկումներ են

Ազգային ժողովի գարնանային նստաշրջանի առաջին եռօրյայի սկզբում նախագահ Արթուր Բաղդասարյանը հավատացնելով, որ ինքն ստուգել է 240 քվեարկությունների 80 տոկոսի բացակայած պատգամավորների ներկա չգտնվելու պատճառները, եւ դրանք հարգելի է համարում, միաժամանակ հորդորում է գործընկերներին նույն վերաբերմունքին արժանացնել բացակայածներին եւ լրջորեն վերաբերվել նիստերին, առավել եւս՝ քվեարկություններին ներկա գտնվելու խնդրին:

Աշխատանքի ընթացքում քննարկվեց եւ ընդդիմության՝ մասնավորապես Արտաշես Գեղամյանի կողմից հանրապետության սոցիալական իրավիճակը գնահատվեց վատթար: Գեղամյանն առաջարկեց չխուսանավել եւ եռօրյայի քննարկմանը դնել էլեկտրաէներգիայի, գազի եւ ջրի սակագների օրենքի նախագիծը՝ առաջացուցելու համար, որ Ազգային ժողովն անտարբեր չէ ժողովրդի շահերին: Այլապես որն Գեղամյանն «Ազգային միաբանություն» խմբակցության մասնակցության հարցն Աժ աշխատանքներին արժանի չի համարի:

Այնուամենայնիվ, նախաձեռնության քննարկումը հետաձգվեց, չնայած դրան նախորդել էր օրենքի նախագիծը հեղինակած Վիկտոր Դալլաքյանի այն փաստարկը, որ առաջին անհրաժեշտության սննդամթերքի՝ հացի եւ դեղորայքի շուրջ 30 տոկոս թանկացումները հիմք են տալիս ենթադրել հետագա թանկացումներ, որոնք ուղեկցվում են չնչին հատուցումներով: Իսկ օրենքի իր կողմից նախորդած հետաձգումը պրն Դալլաքյանը բացատրում է նրանով, որ խուսափել է կառավարության բացասական եզրակացությունից հետո նաեւ գլխադասային հանձնաժողովի բացասական եզրակացությունն ստանալուց: Իսկ այժմ ուղղակի անբույլատրելի է համարում օրինագիծն օրակարգում չընդգրկելը:

Մերժվեց նաեւ քաղաքացիական ավիացիայի ոլորտում ՀՀ կառավարության գործունեությունն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու առաջարկը: Մերժման հիմնական պատճառաբանությունն արդեն ունեցած հանձնաժողովների աշխատանքում այդ խնդրի լուծման ներառման հնարավորությունն է, եւ Աժ շենքի սահմանափակ տարածքը: Ինչպես փաստեց Աժ նախագահ Արթուր Բաղդասարյանը, 15 պատգամավորներ արդեն գրավոր դիմել են իրենք՝ աշխատասենյակ ստանալու խնդրանքով:

Հետաձգվեց նաեւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի», «Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» օրենքներում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծն այս եռօրյայի օրակարգում ներառելը:

Փետրվարի 2-4-ի եռօրյայի նիստերի օրակարգի առաջին մասը հաստատվեց, եւ շուրջ 2 տասնյակ պատգամավորների ներկայությամբ քննարկումներ ծավալվեցին:

ԼԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Դիտարկումներ

Դասելով Ազգային ժողովի կարճաեւ արձակուրդի ընթացքում տեղի ունեցած սրընթաց փոփոխություններից, եւ առաջիկա նստաշրջանում, եւ ներքին ու արտաքին քաղաքական դաշտում հետագրգռական զարգացումներ են սպասվում:

Շնծաղիկների հեղափոխության աղազան վսանգի տակ է: Իշխանափոխության գաղափարը, որի ակունքներին խոնարհվում է հայրենի ընդդիմությունը, հազիվ հրապարակ նետված, ծանր փորձության ենթարկվեց: Ընդդիմադիր քառասված դաշտը չի կարողանում շրթայազերծվել խմբային հավակնություններից: Նույնիսկ իշխանությունների նկատմամբ ատելության մշտական բռնկումները չեն նպաստում միասնական զգացողության ձեւավորմանը: Եվ ընդդիմադիրները, փաստորեն, բաժան-բաժան գործելու հայտարարություններ հրապարակեցին: Թերեւս միայն «Հանրապետություն» կուսակցությունն է, որ առանձնանում է անհամեմատ վճռական կեցվածքով: Անցած շաբաթ կուսակցության խորհուրդը հանդես եկավ հայտարարությամբ, որը հաստատեց մինչեւ վերջ անհաշտ դայֆարի նրա ծգտումը, ամեն կերպ ժողովրդին ոտի կանգնեցնելու մարտական տրամադրվածությունը: Սակայն ամբողջության մեջ ընդդիմության անհեռանկար վարագիծն առայժմ լավ բան չի խոստանում նրան: Աժ գարնանային նստաշրջանն սկսվում է նրա համար աննպաստ, խճճված իրողություններով:

Մեր դաշտիրակները Եվրոպայից վերադարձան թղթե շերեփով: Թերեւս առաջին անգամ Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովը բարյացակամ վերաբերմունք արտահայտեց Ադրբեջանի եւ ակնհայտ սառնություն՝ Հայաստանի հանդեպ: Ինչպես դար առաջ, կրկնվեցին նույն իրողությունները, երբ Մկրտիչ Խրիմյանը, Մինաս Չերազը ընկել էին Եվրոպայի դռները՝ փորձելով բարենպաստ կարծիք ստեղծել հօգուտ Հայկական հարցի: Սակայն Բեռլինի կոնգրեսն անուշադրության մատնեց նրանց ներկայացրած Արեւմտյան Հայաստանի ինքնավարության նախագիծը: Պատմությունը կրկնվում է, քաղաքական կշռի ու վարկանիշի այլ դերակատարներով, այլ միջավայրում եւ այլ սցենարով: Այն ժամանակ էլ, ինչպես հիմա, հայ ժողովուրդը հերթական հուսախաբությունն առրեց:

Մատնանշում նույն առաջարկների անհրաժեշտությունը. այն է՝ ԱԼԻ-ի խնդիրը ՀԱՄ ազատության համաշխարհում, օմբուդսմենի ընտրության ու նշանակման, Հանրային ռադիոյի ու հեռուստատեսության ազգային հանձնաժողովի ու անկախ խորհրդի անդամների նշանակման կարգը: Եվ թերեւս նաեւ այս հաշվարկի վրա ընդդիմադիր դաշտիրակը կուլ տվեց խայծը: Այնուամենայնիվ, Եվրոպայում տեղի ունեցած հակասական այս իրադարձությունները դաշնաոր դարձան, որ մեր իշխանություններն անմիջապես քվության նոխազի իրականացում առաջացնեն՝ Շավարշ Քոչարյանին առաջացմանը: Եվ ընդդիմությունը, գոնե նախկին հեղինակությունը վերադարձնելու համար ստիպված է առաջիկայում ծանր աշխատանք տանել:

Ուշագրավ են նաեւ եվրոպական իրադարձություններին մեր իշխանությունների հաղշատաղ արձագանքները: Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը հետքայլ արեց՝ Աժ նախագահին դիմում հղելով, թե իր առաջարկը իրավական հետեւանքներ չի ենթադրում, քանի որ ուժի մեջ է մնացել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը ՀՀ նախագահի ընտրության վերաբերյալ:

Գարնանային նստաշրջանի նախերգանք

Մեր դաշտիրակները Եվրոպայից վերադարձան թղթե շերեփով

ներից: Նույնիսկ իշխանությունների նկատմամբ ատելության մշտական բռնկումները չեն նպաստում միասնական զգացողության ձեւավորմանը: Եվ ընդդիմադիրները, փաստորեն, բաժան-բաժան գործելու հայտարարություններ հրապարակեցին: Թերեւս միայն «Հանրապետություն» կուսակցությունն է, որ առանձնանում է անհամեմատ վճռական կեցվածքով: Անցած շաբաթ կուսակցության խորհուրդը հանդես եկավ հայտարարությամբ, որը հաստատեց մինչեւ վերջ անհաշտ դայֆարի նրա ծգտումը, ամեն կերպ ժողովրդին ոտի կանգնեցնելու մարտական տրամադրվածությունը: Սակայն ամբողջության մեջ ընդդիմության անհեռանկար վարագիծն առայժմ լավ բան չի խոստանում նրան: Աժ գարնանային նստաշրջանն սկսվում է նրա համար աննպաստ, խճճված իրողություններով:

Մեր դաշտիրակները Եվրոպայից վերադարձան թղթե շերեփով: Թերեւս առաջին անգամ Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովը բարյացակամ վերաբերմունք արտահայտեց Ադրբեջանի եւ ակնհայտ ԵԽՎ մոնիտորինգի խմբի զեկույցից «Ղարաբաղը եւ այլ գրավյալ տարածքներ» արտահայտությունը հաջողելով հանել (ընդ որում անցավ ոչ մեր, այլ իտալացիների առաջարկն այդ վերաբերյալ), նրանք չկարողացան փրկել Հայաստանը ագրեսորի դիտակավորումից. եվ փաստորեն արձանագրվեց ոչ թե բովանդակային, այլ ձեւական արբագրում: Մանավանդ որ նույն արտահայտությունը, այս անգամ անփոփոխ՝ տեղ գտավ Ադրբեջանին վերաբերող զեկույցում՝ ղարաբաղյան հարցի չարագուշակ լուծում ակնարկելով Հայաստանին: Արիստոկրաս Եվրոպան՝ քաղաքակիրթ աշխարհում իր մեծամիտ դիրքից, գուցե ոչ քմահաճորեն, այլ ավելի խորքային դրդապատճառներով, անհասկանալի ռեւեռանս արեց Ադրբեջանին:

Սառնությամբ մերժվեցին նաեւ ընդդիմադիր դաշտիրակ Շավարշ Քոչարյանի առաջարկները: Նման հանգուցալուծումն անսպասելի էր թեկուզ այն տեսանկյունից, որ մինչ այս Հայաստան ժամանած եվրոպական փորձագետներն իրենք էին մեղադրելով ներքին խոհանոցն աշխարհին ի ցույց դնելու մեղքի մեջ: Նույնիսկ շրջանառության մեջ նետվեցին ակնարկներ՝ ընդդիմադիր դաշտիրակին դաշտամավորական մանդատից զրկելու վերաբերյալ: Իրականում սա ոչ թե հայ դիվանագիտության դաշտության, այլ քաղաքական այդ կառույցի լիակատար բացակայության մասին է խոսում, երբ աշխարհի հետ մեր հարաբերությունները կառուցում ենք դաշտական հաշվարկներով, կույրի նման չգուշակելով սահմանները ու մակընթացությունները քաղաքականության անհանգիստ ծովում: Ինչպես դար առաջ, հիմա էլ ցավալիորեն շրջանցվեց այն ճշմարտությունը, թե ոչինչ չի փոխվել, եւ այսօր էլ Հայաստանը գերտերությունների համար շարունակում է մնալ բուֆերային գոտություն՝ միջանկյալ օղակ մեծաքեսական շահերի եւ հարաբերությունների մեջ:

Այս իրողություններն, այնուամենայնիվ, նպաստեցին հասարակության աչքում նաեւ ընդդիմության վարկանիշի հերթական կորուստին ու նրա նկատմամբ հիասթափության առաջացմանը: Եվ ընդդիմությունը, գոնե նախկին հեղինակությունը վերադարձնելու համար ստիպված է առաջիկայում ծանր աշխատանք տանել:

Ուշագրավ են նաեւ եվրոպական իրադարձություններին մեր իշխանությունների հաղշատաղ արձագանքները: Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը հետքայլ արեց՝ Աժ նախագահին դիմում հղելով, թե իր առաջարկը իրավական հետեւանքներ չի ենթադրում, քանի որ ուժի մեջ է մնացել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը ՀՀ նախագահի ընտրության վերաբերյալ:

ԿԱՐԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Պատմության ուսանելի դասերը

1918 թ. հայ-վրացական պատերազմը

Հայ դաշտագրության մեջ սակավ ուսումնասիրված հիմնահարցերի թվում են հայ-վրացական հարաբերություններին առնչվող թեմաները: Այս բացը որոշ չափով լրացնող գործերից է դաշտագիտության թեկնածու, ՀՊՀՀ քաղաքական դաշտության ամբիոնի դոցենտ Վանիկ Վիրաբյանի «1918 թ. վրաց-հայկական պատերազմը, ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը եւ կուսակցությունները» օրերս հրատարակած ուշագրավ աշխատությունը:

Հեղինակն, օգտագործելով արխիվային նորահայտ նյութերը, համակողմանի ներկայացրել է 1918 թ. ընթացքում գոյացած հայ-վրացական հարաբերությունների ողջ բարդույթը, երկու պետությունների միջեւ 1918 թ. դեկտեմբերին ծայր առած երկշաբաթյա պատերազմի ընթացքն ու հետեւանքները, պատերազմի ռազմաքաղաքական արդյունքների ազդեցությունը ընդհանուր աշխարհաքաղաքական իրադրության վրա Անդրկովկասում եւ մասնավորապես Հայաստանի շուրջ:

Բացահայտվում են նաեւ վերոնշյալ բարդ ու խճճված ժամանակահատվածում ՀՀ կառավարության գործունեության առանցքային միտումները, հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշումը վերոնշյալ ռազմական առճակատման նկատմամբ եւ հայկական զինված ուժերի դերը հայ ժողովրդի համար չափազանց ծանր աշխարհաքաղաքական իրավիճակում մղվող այդ պատերազմում:

Տալով ժամանակաշրջանի ընդհանուր բնութագիրը, հետազոտողը հիմնավոր փաստերի օգնությամբ հանգում է այն եզրակացության, որ 1918 թ. դեկտեմբերին բռնկված պատերազմը հետեւանքը եղավ հայ-վրացական հարաբերություններում կուտակված լարվածության եւ չարակամության: Պատճառը Վրաստանի կառավարության եսասիրական, հաճախ չափազանց ցինիկ ու լկտի վերաբերմունքն ու գործողություններն էին իր հարեւանի՝ Հայաստանի հանդեպ: Բազմաթիվ փաստեր հիմնավորում են այն եզրահանգումը, որ վրացիները առանձնակի խոչընդոտներ էին ստեղծում Հայաստան մտնող հաղորդակցության ուղիներում: Այն ժամանակ, երբ սովը հնձում էր մարդկանց, Վրաստանը շարունակում էր փակ պահել Հայաստանի ճանապարհները: Ինչպես նշում են նույնիսկ օտար հեղինակները, Հայաստանի կախվածությունը մթերք եւ էներգակիրներ մատակարարող Վրաստանի ճանապարհներից դարձավ աղագա ռազմական բախման հիմքերից մեկը: Մյուսը՝ վրացիների տարածային հավակնություններն ու ոտնձգություններն էին հայապատկան ու հայաբնակ գավառների (Լոռի, Ախալքալաք) նկատմամբ: Իրավացի է Վ. Վիրաբյանի այն դիտարկումը, որ սույն խնդրում վրացական ղեկավարությանը մեծապես քաջալերում էր Գերմանիան, որը ճանաչել էր Վրաստանի անկախությունը եւ հովանավորում էր նրան:

Օգտվելով գերմանական հովանավորությունից եւ իրենց աշխարհաքաղաքական դիրքից, վրացիներն օրեցօր առավել ագրեսիվ էին դառնում եւ վերջնագրերով Հայաստանի կառավարությունից պահանջում դադարեցնել Լոռու գավառն ամբողջությամբ: Աշխատության հեղինակը փաստական սույգ տվյալներով ներկայացնում է վրաց-հայկական պատերազմի սկիզբն ու ռազմական գործողությունների հետագա ընթացքը:

Երկշաբաթյա պատերազմում վրացական կողմը պարտություն կրեց, սակայն զինադադարից հետո, ինչպես հաճախ է եղել հայոց պատմական ճակատագրում, պատերազմի արդյունքները սրբագրվեցին ի վնաս Հայաստանի: Այս գործում նենգ դիրքորոշում ցուցաբերեցին անգլիական դիվանագիտական եւ զինվորական շրջանները: Հենց վերջիններիս բացահայտ քաջալերանքով վրացական կողմը հաշտության համաձայնագրով կարողացավ իր կազմում պահել հայապատկան Ախալքալաքի գավառը: Վերլուծելով պատերազմի ռազմաքաղաքական հետեւանքները, աշխատության հեղինակը բավական ուշագրավ եզրահանգումներ է անում: Ըստ նրա, պատերազմն ունեցավ կործանարար հետեւանքներ հատկապես Վրաստանի սահմաններում ապրող հայության համար: Պատերազմի ընթացքում վրացական իշխանություններն իսկական մարդասպան կազմակերպեցին հայերի նկատմամբ Թիֆլիսում եւ Վրաստանով մեկ: Հետագայում նույնիսկ վրաց հեղինակները հրապարակավ խոստովանել են այս իրողությունը: Այդ օրերին Թիֆլիսում լույս տեսնող հայկական թերթերը փակվեցին, խմբագիրները ձերբակալվեցին: Ձերբակալվեցին Թիֆլիսի բոլոր հայ միլիցիոներները եւ հեռացվեցին պաշտոններից: Դիպուկ եւ ճշմարիտ է հնչում ժամանակակցի այն պնդումը, որ «Վրաստանը պատերազմ է հայտարարել փաստորեն ոչ թե Հայաստանի կառավարությանը, այլ ամբողջ հայ ազգին»:

Ամփոփելով նշենք այս արժեքավոր աշխատության կարեւորությունն ու հրատապությունն անցյալի մեր պատմությունից օգտակար դասեր ու եզրահանգումներ առնելու առումով:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ,
Պատմական գիտությունների թեկնածու



ՍՏՈՐՈՒՄՆԵՐ

Պահանջատիրության իրավունք

Պատմությունը որդիների մեջ հալածում եւ ոտաժում է հայրերի մեղքերը հին:

Գ. Նժդեհ

Պատմության ամենաչարաշունչ ու մռայլ մի էջին՝ եղեռնական 20-րդ դարասկզբին առնչվող Մեծ Արհացու բնաբանը, ցավոք, նկատում է, որ թե՛ ցեղասպան, եւ՛ ցեղասպանվածների հին մեղքերը հետեւանք են առաջինների՝ իրենց մարդ-տեսակին բնորոշ հատկությունների, տուժածների քաղաքական կարճատեսության, իմա՝ խաբվելու եւ դյուրահավատ լինելու հանգամանքներով: Ոճրագործների սերունդներին դեռեւս իրենց հայրերի մեղքը «հալածում եւ ոտաժում է», որովհետեւ չեն ընդունում Ցեղասպանության փաստը: Իսկ մեր «հայրերի մեղքերը» մենք սրբագործում ենք ինքներս՝ իրականացնելով արցախյան ազատամարտի հաղթանակով նվաճած հողադարձումը, որի շնորհիվ աստիճանաբար սկսում ենք ձերբազատվել «հալածված եւ ոտաժված լինելու» զոհի բարդույթից:

Թուրքիայի հետ քաղաքական, տնտեսական կապեր հաստատել կարելի է միայն նրա ներում հայցելուց եւ ձեռքսեղմումի հայտ ներկայացնելուց հետո, իսկ դա անել կստիպի Ցեղասպանության շարունակական ճանաչումների ազդեցիկ գործոնը: Թեեւ նկատենք՝ որեւէ ներողություն (որը դեռ չի հնչել) չի կարող նվազեցնել Ցեղասպանության հետեւանքով կուտակված կարծր ու բանձր զգացումը, բայց մեղսավոր քայլերը՝ բազմաստեղակ հատուցումներն արդի թուրք սերնդի համար հրամայաբար անխուսափելի են՝ ոտայմանավորված Ցեղասպանության ճանաչման ակտիվ զարգացումներով:

Ցեղասպանությունը նախ եւ առաջ տնտեսական շահերի, բալանի դրդապատճառներ ունի, ավարառու-արյունարբու ցեղը սպանելով է միայն հաց «աշխատում»: Կարելի է ասել, որ այսօրվա մեր տնտեսական «բոքիկ», գերտուղ վիճակը նաեւ դարասկզբյան եղեռնագործության ոտաճառահետեւանքային ծագում ունի: Երկրով մեկ՝ ղեկավար, իշխանավոր, բանվոր, գյուղացի, գործազուրկ եւ ով ասես՝ փողից ենք խոսում, բայց ժամանակ կար, երբ բյուջե բառն էլ կարգին չգիտեինք ինչ է:

Պահանջատիրության դիրքերից փորձենք հետ բերել մեր ոտաքերից կողոպտված «դրամագլուխը»՝ մի ամբողջ հարստություն, որ կարող էր նպաստել մեր «որբ» տնտեսության որոշակի զարգացումներին:

Մեր տնտեսության այս վիճակը հետեւանք է ժամանակագրական այն խզման, օրգանական շարունակության այն ընդհատման, որն առաջացավ դարասկզբի եւ դարավերջի հայկական տնտեսահամակարգերի միջեւ: Եվ ինչո՞ւ ոտիի հարեւանները ցանկանան մեր լավը, նաեւ այսօր, երբ, նրանց կարծիքով, վաս ապրողը բավարարվում է եղածով: Պահանջատիրությունը վերաբերում է ոչ միայն նյութական, այլեւ բարոյական գործոններին՝ ինչ-որ տեղ իբրեւ մասնակի հատուցում միլիոն ու կես զոհերի հիշատակին: Երջանիկ նախախնամությամբ 20-րդ դարավերջին ոտահանջատիրության մասին մեր սոսկ երազանքները մարմնավորվեցին արցախյան ազատամարտի հաղթանակներով:

Թուրքիայի կողմից Ցեղասպանության ճանաչման ուշացման ոտարագայում ոտեմ է ենթադրել, որ նրանք իրենց բնորոշ սիրաշահումներով վերացնեն բոլոր շրջափակումները եւ դադարեցնեն քաղաքական վայնասունն արցախյան հիմնահարցի շուրջ: Բայց անկախ սրանից, միջազգային ասպարեզներում տարբեր մակարդակներով արդեն խոսվում եւ գործնական քայլեր են արվում՝ ի ոտաշտանություն ցեղասպանվածների իրավահաջորդներին հատուցում տալու իրավական խնդրի:

Ոմանց թվում է, թե կարելի է շոշափել միայն սփյուռքում ապրողների իրավահաջորդների շահերը: Սակայն չէ՞ որ իրականում Հայաստանում էլ կան տուժածների իրավահաջորդներ եւ արդեն լսվում են փոխհատուցում ցանկացողների ոտահանջները:

Առաջարկում ենք ոտամական Հայաստանում Ցեղասպանության (եւ ոչ միայն 1915 թվի) ենթարկված ժառանգների շրջանում ծագած տարաբնույթ հարցերը հստակեցնելու եւ բավարար ոտասխաններ ստանալու, նաեւ տարեայնությունից խուսափելու համար ստեղծել ՀՀ կառավարությանն առընթեր, այդ հարցերով զբաղվող հատուկ մարմին:

ՍԱՄՎԵԼ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Միջազգային

Եվրամիությունը մրցակցում է ԱՄՆ-ի հետ

Մրցակցության պայմաններում անսկզբունքայնությունը դառնում է նրա գլխավոր սկզբունքը

Վարչապետ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի ԱՄՆ կատարած այցը: Արդյունքները դեռեւս ամփոփվում են, սակայն հիասթափությունն ակնհայտ է: Վաշինգտոնում Էրդողանն ամեն կերպ փորձում էր նախագահ Բուշին համոզել Իրաքի հյուսիսում քրդական պետության ստեղծման, առավել եւս նավթային պատարներով հարուստ Քիրքուքը քրդերի գերիշխանությանը հանձնելու անողոքակահարմարության մեջ: Սակայն բանակցությունները նրան համոզեցին, որ ԱՄՆ-ի եւ Թուրքիայի գործակցությունը հետզհետե դադարում է ռազմավարական լինելուց:

Այս պայմաններում թուրք-ամերիկյան հարաբերությունների բարելավումն անհնար է դառնում:

Խոսքը տվյալ դեպքում սոսկ Քիրքուքի, քրդական պետության կամ Իրաքի ֆեդերալիզացիայի մասին չէ: ԱՄՆ-ում Էրդողանին չհաջողվեց անգամ Թուրքիայի համար նախատեսված 8,5 մլրդ դոլարի ամերիկյան վարկն ստանալ: Ավելին՝ նա Նյու Յորքում, Վաշինգտոնում եւ Բոստոնում Թուրքիայի համար առանցքային նշանակություն ունեցող քրդական հարցի կողքին արծարծեց նաեւ Հայոց ցեղասպանության հարցը: Սա նշանակում է, որ թուրքերն այս հարցի առնչությամբ եւս լուրջ մտավախություններ ունեն: Համենայն դեպս, թուրքական թերթերը սկսել են գրել ապրիլի 24-ին Թուրքիային սպասվող լուրջ գլխացավանքի մասին:

Վարչապետ Էրդողանը նախագահ Բուշի հետ թերեւս միայն Կիպրոսի հարցում էր փոխըմբռնման հասել, որի արդյունքում պետքարտուղար Քոլին Փաուելին հանձնարարվեց միջնորդի դեր կատարել հունական եւ թուրքական կողմերի միջեւ: Հարկ է, սակայն, նշել, որ մինչ ԱՄՆ նախագահը պետքարտուղարին այդ հանձնարարականն էր տալիս, Եվրախորհրդի մայրաքաղաքի համարում ունեցող Բրյուսելում ելույթ ունեցավ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանը: Նա Փաուելի զբաղվածության պատճառաբանությամբ ուղղակիորեն մերժեց վերջինիս միջնորդությունը, առա եւ ավելացրեց, որ ՄԱԿ-ի հատուկ բանագնաց Ալվարո դե Սոտոն երկար ժամանակ զբաղվում է Կիպրոսի հիմնահարցով, հետեւաբար բաջատեղյակ է դրա բոլոր մանրամասներին:

Անանի ելույթը սփոթեց տեղի տալ Փաուելին: Այսպիսով, առաջ քաշելով նրա միջնորդությունը Կիպրոսի հարցում՝ ԱՄՆ-ի քաղաքական նախաձեռնությունը պահպանելու Էրդողանի հավակնները խախտվեցին: Առաջին հայացքից գուցե տարօրինակ թվա, բայց Էրդողանի այցի ընթացքում պատսպնական Վաշինգտոնի՝ Անկարային պատճառած հիասթափությունը վերջինի առջեւ Եվրամիությանը մերձենալու հեռանկարներ բացեց: ԵՄ-ի ներկայացուցիչները եւ այնպիսի երկրների ղեկավարները, ինչպիսիք են Գերմանիան եւ Իսպանիան, սկսեցին սիրաշահել Թուրքիային: Մինչդեռ Էրդողանը Կիպրոսում ամերիկյան նախաձեռնությունը պահպանելու հավակներով իրականում փորձում էր ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի միջեւ խուսանավել, որպեսզի Թուրքիան չմեղադրվի ոչ ՄԱԿ-ի քարտուղարի ծրագիրը ձախողելու, ոչ էլ հիմնահարցի կարգավորումից խուսափելու մեջ:

Հարցը, սակայն, մեղադրվելը չէ, այլ Եվրահանձնաժողովի վերջին զեկուցագիրը, որտեղ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությունն առաջին անգամը լինելով պայմանավորվում էր Կիպրոսի հիմնահարցի կարգավորմամբ: Ակամա հարց է ծագում՝ եթե դա այդպես է, ապա Եվրոպական երկրները եւ ԵՄ-ը ինչո՞ւ են սիրաշահում Թուրքիային: Հարցի պատասխանը միանշանակ է՝ առաջիկա մայիսի 1-ին Կիպրոսի Հանրապետությունը, թեկուզ առանց թուրքական հաշվածի, դառնում է ԵՄ-ի անդամ: Դա Եվրոպական այս կառույցին արեւելյան Միջերկրականը վերահսկելու, ինչպես նաեւ ԱՄՆ-ի միանձնյա վերահսկողության տակ գտնվող Մերձավոր եւ Միջին Արեւելքին հնարավորինս մոտենալու հնարավորություն է տալիս:

Այլ կերպ՝ Կիպրոսը նպատակ չէ, այլ՝ միջոց: Այս դեպքում կիպրական հիմնահարցն էլ ԵՄ-ի ձեռքին ազդեցության լծակ է դառնում՝ տալով Եվրոպական երկրներին եւ Կիպրոսի հակամարտող կողմերին զսպաբաժիկ հագցնելու, եւ դա Հունաստանի ու Թուրքիայի դեմ օգտագործելու հնարավորություն: Ուրեմն ԵՄ-ի համար Կիպրոսի հիմնահարցի սառեցումը դրա կարգավորումից ավելի շահավետ է: ԵՄ-ԱՄՆ մրցակցության պայմաններում Վաշինգտոնից Անկարայի հիասթափությունն էլ Եվրոպական երկրների համար ավելի քան շահավետ է դարձնում Թուրքիային սիրաշահելը: Դա, իհարկե, ինքնանպատակ չէ, այլ Թուրքիայի միջոցով եթե ոչ Մերձավոր եւ Միջին Արեւելք ներթափանցելու, ապա դրա հնարավորությունն ունենալ եւ դրա միջոցով տարածաշրջանում ԱՄՆ-ի հետ մրցակցության լուրջ հայտ ներկայացնելու համար է առվում: Մրցակցության պայմաններում, երբ դա պայմանավորվում է քաղաքական շահերով, անսկզբունքայնությունն ինքնաբերաբար դառնում է մրցակցողների գլխավոր սկզբունքը:

ԵՄ-ի հետաքրքրությունների շրջանակները, սակայն, Կիպրոսով կամ Մերձավոր Արեւելքով չեն սահմանափակվում: Դժբախտաբար, եվրոպական այս կառույցը քաղաքական շահեր է հետապնդում նաեւ Անդրկովկասում, որտեղ դիրքեր ամրապնդելու նկատառումով սկսում է սիրաշահել Ադրբեջանին: Դրա վառ ապացույցը ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման համար փուլային տարբերակի առաջարկումն է:

Օրակարգից վաղուց դուրս մղված այս տարբերակի առաջարկումը ԵՄ-ի անսկզբունքայնության մեկ այլ դրսեւորում է: Համենայն դեպս, ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանն անմիջապես արձագանքեց եւ մերժեց առաջարկը: Այդ իսկ պատճառով առանց խորանալու վերոհիշյալ առաջարկի էության մեջ, ասենք, որ անկախ Կիպրոսի միջոցով արեւելյան Միջերկրականը վերահսկելու, իսկ Թուրքիայի եւ Ադրբեջանի միջոցով՝ համապատասխանաբար Մերձավոր ու Միջին Արեւելք եւ Անդրկովկաս ներթափանցելու այս հավակներից, ԵՄ-ը դեռեւս ինքնուրույն բեւեռ չէ: Հետեւաբար ԱՄՆ-ի հետ մրցակցությունը նրան հազիվ թե հաջողություն բերի: Այս հանգամանքն Ադրբեջանը, Թուրքիան, Կիպրոսի Հանրապետությունը, Հունաստանը հավի կառնե՞ն, դժվար է ասել: Բայց որ Հայաստանն արդեն հավի է առնում՝ ակնհայտ է:

ՀԱԿՈԲ ՉԱԲԲՈՒՆ

Պակիստանի ատոմային ռումբի «հայրը» գաղտնիքներ է հայտնել Իրանին, ԿԺԴՀ-ին, Լիբիային եւ Մալայզիային

Պակիստանի ատոմային ռումբի ստեղծման ծրագրի հեղինակ Աբդուլ Քադիր Խանը խոստովանել է, որ ուրանի հարստացման տեխնոլոգիաներ եւ այլ գաղտնիքներ է հայտնել Իրանին, ԿԺԴՀ-ին, Լիբիային եւ Մալայզիային: Ներկայումս պակիստանյան հատուկ ծառայությունները հարցաքննում են նրա լաբորատորիայի աշխատակիցներին:

Աբդուլ Քադիր Խանը պնդում է, թե ինքը միջուկային տեխնոլոգիաներին առնչվող գիտելիքներն օտարներին հայտնել է «անշահախնդիր» կերպով: Ֆրանսպրեսը նշում է, թե նրան դատական հետաքննությունների ենթարկելու հարցը դեռեւս մնում է առկախ:

Անցյալ շաբաթ Աբդուլ Քադիր Խանը հեռացվել էր կուսակցության խորհրդականի պատասխանատվությունից: Քննիչները ենթադրում են, թե նա իր անօրինական գործունեությունն սկսել է 1986-87 թթ., շարունակելով մինչեւ 1997 թ., երբ պակիստանյան հետախուզությունը բացահայտեց ԿԺԴՀ-ին ուրանի հարստացման ցենտրիֆուգների առախնամ փաստեր:

Պակիստանցի ատոմագետը ԿԺԴՀ-ին տրամադրել է համապատասխան գծագրեր, կորեացիներին ընդունել իր լաբորատորիայում: Նաեւ մասնագետներ է գործուղել Մալայզիա՝ ուրանի հարստացման գազային ցենտրիֆուգների բաղադրիչների արտադրություն ստեղծելու նպատակով: Հարցաքննություններ սկսվեցին օրերս, երբ Պակիստանի իշխանությունները ՄԱԳԱՏ-ից ստացան նամակ, որտեղ խոսվում է Իրանի եւ Լիբիայի միջուկային ծրագրերին պակիստանցիների հնարավոր մասնակցության մասին:

Ամերիկյան զորքը դուրս է բերվում Բաղդադի կենտրոնից

Ամերիկյան բանակն էապես կրճատում է իր ներկայությունը Բաղդադում: Այդ մասին կիրակի օրը հայտարարել է բանակի գերագույն հրամանատարության ներկայացուցիչ ԱՄՆ պաշտպանության նախարարի օգնական Փոլ Վոլֆովիցը Իրաք կատարած այցի առթիվ:

Առաջին զրահատանկային դիվիզիայի հրամանատար, բրիգադային գեներալ Մարտին Դեմպսին «Ոյթեր» գործակալության թղթակցին ասել է, որ Իրաքի «նոր ոստիկանությունն արդեն լիովին ի վիճակի է քաղաքում կարգուկանոն պահպանելու»: Վոլֆովիցն իր հերթին ասել է, որ «առաջավոր գծում իրաքցի ոստիկանների ներկայությունն, անկասկած, նախընտրելի է թե՛ ամերիկացիների եւ թե՛ իրաքցիների համար»:

Բաղդադի կենտրոնից դուրս բերվող ամերիկյան զորքերը վերաբաշխվում են քաղաքի ծայրամասերում գտնվող ռազմակայաններում: Նախկին 60 բանակային պահակակետերի փոխարեն ներկայումս Բաղդադում մնացել է 26-ը: Ամերիկացի սպաների խոսքերով, ապրիլի կեսերին մնալու է ընդամենը 8 պահակակետ:

Այսօր Բաղդադում պարեկություն են անում մոտ 8000 ոստիկաններ: Ոմանց կարծիքով, հինգուկես միլիոնանոց քաղաքում ոստիկանների թիվը պետք է հասնի 19 հազարի: Ամերիկյան ռազմական հետախուզության տվյալներով, Բաղդադում գործում են 250-300 պարտիզաններ, որոնք միավորված են 14 ահաբեկչական խմբերում:

ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ

Մեքքայի մոտակայքում հրմշտոցից զոհվել է 251 ուխտավոր

Մահմեդականների գլխավոր սրբավայր Մեքքայում եւ շրջակա այլ վայրերում այս օրերին բյուրավոր ուխտավորներ են հավաքվել աղոթքների եւ զանազան կրոնական ծիսակատարությունների համար: Սաուդյան Արաբիայի իշխանությունների հավակների համաձայն, այս տարի ուխտավորների թիվը պետք է հասներ 1,7 միլիոնի: Բայց Մեքքայում կիրակի օրն ավարտված ուխտագնացությանը փաստորեն մասնակցել է 2 մլն մարդ:

Նման բազմամարդ ծիսակատարությունները հաճախ զոհերի պատճառ են դառնում: Այս անգամ էլ Մեքքայից ոչ հեռու գտնվող Մինա հովտում տեղի ունեցած հրմշտոցի ժամանակ զոհվել են 251 ուխտավորներ, նույնքան անձինք էլ զանազան խեղումներ են ստացել: Այդ մասին լրագրողներին հայտնել է Սաուդյան Արաբիայի ուխտագնացության գործերի նախարար Իյադ բին Ամին Մադանին:

Հրմշտոցն սկսվել է Ջամարաթ կամրջի վրա, որտեղից ուխտավորները քարեր էին նետում սատանային խորհրդանշող սյան վրա: Մադանին պնդում է, թե սաուդյան իշխանությունները բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկել էին կարգուկանոն ապահովելու համար, բայց անհնար է ամեն ինչ կանխատեսել:

Ֆրանսպրեսը հիշեցնում է, որ անցյալ տարի Մեքքայի ուխտագնացության օրերին զոհվել էր ընդամենը 14 մարդ: Սակայն նախընթաց տարիներին եղել են նաեւ ավելի մեծ ողբերգություններ: Այսպես, 1990 թ. Մեքքայի գետնուղում ոտնատակ լինելով զոհվեց 1426 մարդ, 1997 թ. Մինա հովտում խփված վրանավանում հրդեհից այրվեց 340 ուխտավոր, 2001 թ. Ջամարաթ կամրջի վրա զոհվեց 35 մարդ:

Էրբիլում պայթեցվել են քրդական երկու կուսակցությունների կենտրոնակայանները

60 զոհերի մեջ կան քուրդ առաջնորդներ եւ պաշտոնյաներ

Իրաքյան Քրդստանի Էրբիլ քաղաքում երկու մահապարտ ահաբեկիչներ պայթեցրել են քրդական երկու գլխավոր կազմակերպությունների՝ Քրդստանի հայրենասիրական միության (ՔՀՄ) եւ Քրդստանի ժողովրդական կուսակցության (ՔԺԿ) կենտրոնակայանները: Ահաբեկչությունները տեղի են ունեցել կիրակի օրը, երբ քրդական կուսակցությունների շենքերում հարյուրավոր մարդիկ էին հավաքվել մահմեդականների կուրբան-բայրամ տոնը նշելու:

Մահապարտ ահաբեկիչները երկու պայթյուններն իրականացրել են գրեթե միաժամանակ: Ահաբեկչությունները հանդիպել են նաեւ ԱՄՆ պաշտպանության նախարարի օգնական Փոլ Վոլֆովիցի Իրաք կատարած հերթական այցին:

Իրաքում անգլո-ամերիկյան կոալիցիոն ուժերի հրամանատարի տեղակալ, գեներալ Մարկ Կիմիթի խոսքերը վկայակոչելով Ֆրանսպրեսը հաղորդում է, որ երկու ահաբեկչություններից զոհվել է առնվազն 56 մարդ, մոտ 200-ը վիրավորվել են: Ասոշիեյթեդ պրես գործակալության տվյալներով, զոհվել է 57 մարդ, իսկ վիրավորների թիվը 235 է: Իսկ Էրբիլի քրդական վարչակազմի նախարարներից մեկի խոսքերով, սպանվածների թիվը հասնում է 100-ի:

Ֆրանսիայում ՔԺԿ ներկայացուցիչ Սայվան Բարզանին Ֆրանսպրեսի թղթակցին ասել է, որ զոհերի մեջ են Էրբիլի քուրդ փոխնահանգապետը եւ նախարար Շաուքաթ Շեյխ Եզդինը: Սպանվել են նաեւ մի խումբ քուրդ առաջնորդներ, մասնավորապես նահանգապետ Ալբաս Մանսակը, ՔԺԿ 3-րդ դեմքը հանդիսացող Սամի Աբդել Ռահմանը եւ ՔՀՄ վարչության անդամ Շահուան Աբբասը:

Անգլո-ամերիկյան օկուպացիոն ուժերի խոսնակ Դեն Սենորը վարչակազմի անունից դատապարտել է ահաբեկչությունները եւ խոստացել է գտնել ու պատժել դրանց կազմակերպիչներին: Գեներալ Կիմիթը ենթադրել է, թե կազմակերպիչներն արտերկրում են: «Դա կարող է լինել իրանցի իսլամիստ քրդերի «Անսար ալ իսլամ» կազմակերպությունը, «Ալ Ղաիդան» կամ որեւէ այլ ահաբեկչական խմբավորում», հայտարարել է Կիմիթը:

ՔԺԿ խոսնակը իր հերթին մեղադրել է «ծայրահեղական, ահաբեկչական, իսլամիստական կուսակցություններին»: Ի դեպ, ՔՀՄ առաջնորդ Ջալալ Թալաբանին դեռ չորեքշաբթի օրը հայտարարել էր, թե «Ալ Ղաիդան», «Անսար ալ իսլամը» եւ «արտերկրից եկած զանազան մարտիկներ» ահաբեկչություններ են իրականացնում Իրաքում: Նա պատասխանել էր «կտրել նրանց ձեռքերը», եթե գան Քրդստան: Այնպես որ, Էրբիլի ահաբեկչությունները թերեւս իսլամիստների պատասխանն են Թալաբանիին:

Համաներում ստացած թալիբները կշարունակեն «արքազան պատերազմը»

«Թալիբան» շարժման ռազմականացված ստորաբաժանումների նախկին մարտիկները հայտարարել են, որ Աֆղանստանի նախագահ Համիդ Կարզայի շնորհած համաներումն իրենց հետ չի պահի «անհավատների» դեմ կռվելու մտքից: Ներում ստացած թալիբները մտադիր են կրկին զենք վերցնել եւ շարունակել «արքազան պատերազմը» կոալիցիոն ուժերի դեմ:

Լոնդոնի «Թելեգրաֆ» թերթը նշում է, որ Շեբերխանի բանտի 400 թալիբ կալանավորների մեծ մասն արտահայտվել է նման ռազմաշունչ ոգով: «Ալլահը մեզ հրամայում է մարտնչել անհավատների դեմ: Եվ մեզ համար միեւնույն է՝ դրանք ամերիկացիներ՞ ենք, բրիտանացիներ՞, թե՞ ռուսներ», ասել է այդ թալիբներից մեկը:

Արեւմուտքում բավական զուսպ են ընդունել նախագահ Կարզայի նախաձեռնությունը: Ամերիկացի պաշտոնյաներից մեկը հայտարարել է. «Մենք հասկանում ենք, որ սա թալիբների առավել արմատական մասի համակրանքը շահելու փորձ է: Բայց մենք կտրականապես դեմ կլինենք կոալիցիոն ուժերի անվտանգությանն սպառնացող գործողություններին»:

Տիգրան Մանսուրյան. «Արվեստի մարդը մարգարե է»

Կամերային երաժշտության տանը մեծարանքով նշվեց Հայաստանի ժողովրդական արտիստ, ռեժիսոր մրցանակների դափնեկիր Տիգրան Մանսուրյանի ծննդյան 65-ամյակը: Երեկոն, որն արտիստական վարպետությամբ վարում էր Ազատ Գասպարյանը, միավորեց Էդվարդ Միրզոյանի, Սվետլանա Նավասարդյանի, Վահագն Ստամբոլցյանի, Ռուբեն Ամիրբեկյանի, Յանա Դարյանի եւ Արմեն Հուսունցի ելույթները: Վերջում ծավալուն խոսքով հանդես եկավ ինքը՝ հոբելյարը, արտաբերելով իր ստեղծագործության համար կարեւոր արտահայտությունը. «Հայոց լեզուն իմ հոգու հայրենիքն է»:

Հայաստանի ժամանակակից երաժշտության ծավալուն համայնապատկերում դժվար է նշել մեկ ուրիշ անուն, որն այնքան սերտորեն կապված լինի վերջին 40 տարվա նորարարական ձգտումների հետ: Տիգրան Մանսուրյանի նորարարությունը ոչ թե գրության տեխնոլոգիայի նոր ձեւերի ստեղծումն է, այլ զանազան ժամանակակից թե հինավուրց, ազգային թե համաեվրոպական ավանդույթների ներուժի բացահայտումը: Նման նորարարության առաջադիմական նշանակությունը, բնականաբար, չէր կայանա առանց Մանսուրյանի արվեստի գեղարվեստական բարձր արժանիքների: Դրա հետ մեկտեղ «հաջորդայնության ռակուրսը» թույլ է տալիս գնահատել այդ անհատի մասնաբը, որն իր անհատականության ոլորտներով ներգործում է կոմպոզիտորական դպրոցի ուղղվածության վրա, դաստիարակում գեղագիտական որոշակի հակումներ, բացում ազգային երաժշտության հորիզոններ: Անհատականության մասնաբը Մանսուրյանին հիմք է տալիս լինելու բացառապես հայ կոմպոզիտոր եւ միաժամանակ մեր ժամանակի արվեստագետ, որն ամփոփում է մարդկության փորձը եւ իր ազգի փորձը: Սա է Մանսուրյանի երաժշտության ընկալման արձագանքի պատճառներից մեկը: Յուրաքանչյուր երկում նրա երաժշտությունն ընդունվում է որպես իր էությամբ օրգանական, նորի ու հնի համադրությունից ծնված երեւույթ:

Տիգրան Մանսուրյանի (ծնվել է 1939 թ. Բեյրութում, 1947 թ. ընտանիքի հայրենադարձվել է Հայաստան՝ սկզբում Արթիկ, իսկ 1956 թ. Երեւան, որտեղ ավարտել է Երաժշտական ուսումնարանը՝ Էդուարդ Բաղդասարյանի կոմպոզիցիայի դասարանում, ապա կոնսերվատորիան եւ ասպիրանտուրան՝ Ղազարոս Սարյանի դասարանում) ստեղծագործական ուղին սկսվեց 60-ական թթ.: Այն աչքի ընկավ մի քանի փուլերով, որոնք ոճական առումով այնքան տարբեր են, որ քննադատներին հաճախ ստիպեցնում էր ստեղծագործության բուն զարգացման տրամաբանությունը: Ժամանակի ընթացքում պարզ դարձավ, թե որքան արդարացված էր այդ ժամանակաշրջանը: Այնտեղ միահյուսվել են պրոֆեսիոնալ համընդգրկունությունը, 20-րդ դարի մշակութային նվաճումներն ակտիվորեն յուրացնելու ցանկությունը, իսկ մյուս կողմից՝ ստեղծագործության սեփական «գոտիների» որոնումը: Հենց 60-ական թվականներին առանձնանում են այդպիսի 3 գոտիներ, որոնք տարբերվում են, բայց հաջողությամբ գոյակցում, հասկանալական դառնալով հետագա տարիների համար. դրանք են նեոկլասիցիզմը, դոդեկաֆոնիկ սերիալիզմը եւ ոճավորված արխայիկան: Նշված գոտիների լավագույն նմուշներն էին նեոկլասիցիստական նվագախմբի «Պարտիտան», սերիալ տեխնիկա օգտագործող ջութակի ու դաշնամուրի 2-րդ սոնատը եւ Դաշնամուրի սոնատը, վերջապես միջնադարյան երգեցողական ավանդույթներին միտված «Հայրեններ» վոկալ շարքը՝ Ն. Քուչակի խոսքերով, որոնք նշանակալի դարձան ամբողջ հայ երաժշտության եւ, իհարկե, նախ եւ առաջ Տիգրան Մանսուրյանի ստեղծագործական առաջընթացի համար:

Այսպես, «Պարտիտայի» դասական ոգին զգացվեց 70-80-ական թթ. վերջերի երաժշտության մեջ, օրինակ, դաշնամուրի համար գրված «Երեք պիես թանձր տոներով» ստեղծագործության մեջ եւ գործիքային համույթի համար գրված «Հոետոում», բայց հատկապես Թավջութակի երկրորդ եւ Ջութակի կոնցերտներում: Սերիալիզմի դրական իմաստն իրեն զգալ տվեց հետագա ամբողջ ժամանակամիջոցում, թեեւ դրա նշանները բավականաչափ տարբեր էին. «Թռչնի ուղիներ» երկու սյուիտներ, «Ինտերիեր» լարային քառյակի համար, «Ինտերմեցո» ծայնի եւ համույթի համար: Այդ ստեղծագործությունների դասերը յուրօրինակ կերպով բեկվեցին հետագայում Մանսուրյանի առավել նշանավոր ստեղծագործություններում. «Պրելյուդներ» եւ «Գիտերային երաժշտություն» նվագախմբի համար, «Կրկնակի կոնցերտ ջութակի, թավջութակի եւ լարային նվագախմբի համար», «Թովեմ» 15 գործիքի համար: Արխայիկայի հետ կապված գոտին չափազանց նշանակալի էր: Եթե սկզբում Մանսուրյանը հակված էր այդ ոճի հատկանիշների էմոտիվիկ վերարտադրմանը, ապա ժամանակի ընթացքում առավել ակտիվորեն հետազոտում է դրա կանոնական բնույթը, գտնում այն ոճական տարրերն ու բառային ասոցիացիաները, որոնք գործիքային երաժշտության մեջ ենթակա են վոկալ օրինաչափությունների գործառական բեկմանը:

Երաժշտական եւ ասերգային ոլորտիկայի փոխներթափանցման գաղափարն իր արտացոլումը գտավ շատ ստեղծագործություններում 70-ական թթ. վերջերից, թեեւ արդեն այն ժամանակ նկատվում էր լեզվի պարզեցման, զգացմունքների ներականացման, ընդհանուր հնչյունային երանգապնակի մեղմացման միտում: Ասվածի օրինակ կարող են ծառայել կնոջ ձայնի եւ գործիքային համույթի համար գրված 4 մադրիգալները: Այս առումով որոշակի ազդեցություն գործեց նաեւ կինոյի համար կատարված ինտենսիվ աշխատանքը. նրա երաժշտությամբ ստեղծված միայն գեղարվեստական ֆիլմերի թիվը մոտենում է 50-ի: Եվ նույնիսկ թատրոնի համար գրված միակ ստեղծագործությունը՝ Սոֆիսակի երկրաշարժից զոհված երեխաներին նվիրված «Ձյունե թագուհի» բալետը դարձավ Մանսուրյանի առավել ժողովրդայնացված երաժշտության նմուշը:

Վերջին տասնամյակներում Մանսուրյանի արվեստը պահպանում է նրա կոմպոզիտորական լեզվաոճի անկրկնելի «դարձվածքները», որն այժմ դարձել է համաշխարհային մշակույթի սեփականություն: Սովորականի պես նրա ստեղծագործություններից շատերում (Ալտի կոնցերտում, ալտի եւ սաքսոֆոնի համար գրված «Lacrymae»-ում) զարգացումը կառավարվում է նուրբ ինտելեկտուալիզմով, որը ծնում է խիստ, ճարտարապետորեն իմաստավորված համամասնություններ: Կրկին երաժշտությունը չափազանց անձնավորված է, մտերմիկ-վստահական, հաստեղգրված միայն լսել ցանկացողներին: Կրկին երաժշտական շարժումը չի ձգտում նվաճել մեծ տարածքներ: Ընդհակառակը, դրան հատուկ է գործողության շառավղի սահմանափակությունը, որը հանգեցնում է հոգեվիճակների խորության: Գեղագիտական որոշակի հայեցակարգի համատեքստում այդ գծերը ձեռք են բերում տարբերիչ արտահայտչական իմաստ: Նեոիմրեսիոնիստական միջոցների ընտրությունը երաժշտության հոգեբանական ուղղվածությանը զուգորդվելով ծնում է մտածողության նոր որակ, որին բնորոշ են զարգացման անշտապությունը, կրկնվող դիրքերի հակումը, թույլ հակադրականությունը, չնայած ներքին պոռթկումների առկայությանը: Կոմպոզիտորը նախընտրում է դանդաղ տեմպերը, որոնք պարունակում են մեծ լարվածություն, հուզական էներգիա: Նշենք նաեւ թեմատիկ սկզբունքի կարեւորությունը: Սակայն թեմատիկ աշխատանքի ավանդական եղանակների օգտագործումը պարզունակությունից զերծ է կոմպոզիցիոն հնարամտության եւ ազգային հնչեղանգով նրա երաժշտության ներթափանցվածության շնորհիվ:

Տիգրան Մանսուրյանի արվեստին բնորոշ է եւս մեկ կարեւոր հատկանիշ. այն կրում է հավաստիության, կենսականության, ժամանակի ոգու կնիքը: Պատճառն այն է, որ կոմպոզիտորը կարողանում է անսալ իր ժամանակին եւ դրա հետ մեկտեղ իրեն զգալ մեծ եւ ինքնօրինակ մշակույթի ժառանգորդը, որտեղ անանուն ավանդույթները միահյուսվել են մեծ վարպետների նվաճումների, այն մշակույթի հետ, որն աշխարհին տվել է Կոմիտաս եւ Խաչատրյան:

ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
Արվեստագիտության դոկտոր

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Նոր էջեր Չոհրապից

Հրատարակվելու է նաեւ Գրիգոր Չոհրապի երկիատորյակը

Հայաստանի գրականության եւ արվեստի թանգարանը 2001 թ.-ից սկսեց Գրիգոր Չոհրապի երկերի քառհատորյա ժողովածուի հրատարակումը: Այն իրականացվեց Ալբերտ Շարուրյանի աշխատասիրությամբ, ԱՄՆ-ի Հայ առաքելական եկեղեցու Արեւելյան թեմի առաջնորդարանի ֆինանսավորմամբ եւ գրողի դստեր՝ Դոլորես Լիբման-Չոհրապի կտակի համաձայն: Նախորդ տարի ժողովածուի հրատարակումն ավարտվեց: Քառհատորյակի տպաքանակը սահմանափակ է՝ ընդամենը 1000 օրինակ: Այդ է պատճառը, որ ժողովածուն չի հայտնվել վաճառում, այլ նվիրատվության կարգով բաժանվել է մասնագիտական շրջանակներին, գիտամշակութային հաստատություններին: Իսկ հասարակությունը ժողովածուին կարող է ծանոթանալ գրադարաններից օգտվելով: Քառհատորյակում զետեղված մի շարք գործեր, հրապարակախոսական ելույթներ, հայ իրականությանը վերաբերող ուսումնասիրություններ, նամակներ եւ ընծայագրեր ընթերցողին ներկայացվում են առաջին անգամ: Բայց սա ամբողջը չէ: Ալբերտ Շարուրյանն ու գրականության եւ արվեստի թանգարանն արդեն հրատարակության են պատրաստել Գրիգոր Չոհրապի օսմանյան պառլամենտում, ազգային ժողովում ունեցած ելույթների, մամուլում զետեղված հրապարակախոսությունների, հարցազրույցների 560 էջանոց ժողովածուն, որը շուտով կտպագրվի 1000 օրինակով եւ, ինչպես գրողի երկերի քառհատոր ժողովածուն, կտրվի մասնագետներին, գիտամշակութային հաստատություններին:

Ժողովածուում ներառված նյութերն ընթերցողին են ներկայացվում առաջին անգամ: Քսան տարի մշտական աշխատանքի արդյունքում Ալբերտ Շարուրյանը հավաքել եւ ուսումնասիրել է ինչպես գրողի ելույթները, այնպես էլ ժամանակի հայկական, ֆրանսիական եւ թուրքական մամուլում հրապարակված հոդվածները ու հարցազրույցները, սակայն կատարելիք աշխատանք դեռ կա թե՛ արդեն, ներկայացվածը, թե՛ ժամանակի թուրքական մամուլն ուսումնասիրելու տեսանկյունից, քանի որ վերջինիս որն Շարուրյանը հասկանալի պատճառներով լիովին ձեռնհաս չի եղել:

Այնուամենայնիվ, հրատարակիչների նպատակը Գրիգոր Չոհրապի գրական ժառանգությունն ամբողջապես ներկայացնելն է: Սակայն, ինչպես կարծում է Ալբերտ Շարուրյանը, որն իր կյանքի մեկ տասնամյակը չէ, որ նվիրել է Չոհրապի կյանքի եւ գործունեության ուսումնասիրմանը, անգամ ասվածաշնչյան հայտնի երկարակեցությունը թերեւս չբավարարի Չոհրապի ողջ ժառանգությունը կատարելապես ներկայացնելուն:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վաղը շա՞տ են կարդալու

Գրադարանի ընդհանուր ընթերցասրահը նախատեսված է 180 պարապողի համար, սակայն այնտեղ ուսանողների թիվը 10-15 է:

Մեծերն ասում են, որ ի տարբերություն սովետական ժամանակների, այսօր երիտասարդների մեծ մասը կարդում է միայն քննություններին պատրաստվելու համար: «Ուսանողների՝ գեղարվեստական գրականությունից օգտվելու չափն ինձ չի գոհացնում,– ասում է Հայաստանի ազգային գրադարանի փոխտնօրեն Ռաֆիկ Ղազարյանը: –Շատերն այստեղ ոչ թե գալիս են իրենց տեսական ընդհանուր գիտելիքները բարձրացնելու համար, վաղվա զարգացած մասվորականը լինելու, այլ միայն դաս սովորելու»:

Բայց ուսանողներն էլ իրենց բողոքն ունեն՝ դժգոհում են սպասարկման որակից: «2 օրից քննության եմ, գիրքը սկզբում ուրիշի պատվերի տակ էր, գալիս էի, պարապում էի, բայց հիմա հետ են տարել, մինչեւ պատվիրեմ, բերեն, մի քանի օր կանցնի, էլ չեմ կարողանա պարապել, գիրքն էլ ուրիշ գրադարաններում չկա», ասաց ընթերցողներից Արշակը: «Իսկ իմ գրքի համար արդեն 5 անգամ գնացել-եկել եմ, բարձրացել եմ հնարավոր բոլոր աշխատասենյակները, անգիր կարող եմ ասել, թե պատվերի թերթիկը ինչ ուղղությամբ է գնացել, խոսացել են վաղը գիրքս ընթերցասրահ տանել», շարունակեց ընկերը:

Բողոքի հիմնական պատճառը, ըստ փոխտնօրեն Ղազարյանի, գրքերի պակասն է: Ազգային գրադարանի ֆոնդը 6.5 մլն է կազմում: Ստանում են հայերեն հրատարակվող բոլոր գրքերից, սակայն՝ ընդամենը 2-3 օրինակ: Մեկը մնում է անձեռնմխելի ֆոնդում՝ դարերի համար, սպասարկվում են մնացած օրինակները: Իսկ երբ ընդամենը 1 օրինակ են ստանում, այն պատճենահանելու միջոցներ են փնտրում: Խնդիրն առաջին հերթին վերաբերում է իրավաբանական, տնտեսագիտական գրականությանը, օրենսգրքերին: Ըստ փոխտնօրենի՝ ժամանակին մասնավոր բուհերին առաջարկել են հատկացումներ կատարել գրադարանին, որ գոնե մասնագիտական գրքերից 4-5 օրինակ կարողանան սպասարկել, բայց վերջիններս չեն համաձայնել:

Գրադարանը 20 տարի է՝ չի նորոգվել, ջեռուցման խնդիր ունի: Գրադահոցում անհրաժեշտ 18 աստիճանի փոխարեն ծմռանը 5-6 աստիճան են կարողանում ապահովել: Այդ պայմաններում առաջին հայացքից կարող է թվալ, թե գրքերը չեն փչանում, բայց արդյունքները կարող են 10-20 տարի անց զգացվել: Պետությունը ֆինանսներ չունի, իսկ գործարարներն այստեղ շահ չեն տեսնում:

Դեռեւս 1980-ականների վերջին գրադարանում իրականացվում էր մի ծրագիր, որով ֆոնդի մասին ինֆորմացիան անցկացվում էր համակարգչի մեջ: Այդ ուղղությամբ որոշ աշխատանքներ կատարվեցին, սակայն սովետական կարգերի փլուզումից հետո ամեն ինչ կորավ: Այժմ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվում է «Գրադարանների տեղեկատվական միասնական ցանց» ծրագիրը, որում ներգրավված են հանրապետության 6 խոշոր գրադարաններ: Եթե ամեն ինչ նորմալ ընթանա, ինֆորմացիայի մուտքագրումը մի քանի տարում կավարտվի: Հետագայում նախատեսվում է ցանցին միացնել հանրապետության մյուս գրադարանները: «Մենք այսօր խնդիր ունենք բաժինները համակարգչացնելու, ասաց փոխտնօրենը, գրադահոցում, ընթերցասրահներում չունենք բավարար քանակի համակարգիչներ, որ ամեն պահի տեղեկություն տրվի, թե գիրքը որտեղ է»:

Այդ դեպքում ուսանողները չեն բողոքի, թե սպասարկումը վատ է, թե իրենց ասում են՝ գիրքը ընթերցասրահում է, գնում են ընթերցասրահ, պարզվում է՝ հետ է եկել գրադահոց, հետո նորից են պատվիրում, բայց արդեն՝ անիմաստ. հաջորդ օրն առավոտյան քննության են:

«Այսօր սոցիալական-հասարակական կյանքը որոնումների մեջ է: Այսօր նոր արժեքներ պետք է ձեւավորվեն, նոր գնահատականներ պետք է լինեն: Դա միանգամից չի կատարվում: Սակայն եթե համեմատենք 1990-ականների սկզբի հետ, այսօր վիճակը միանշանակ բարելավվել է: Հետագայում երիտասարդները ոչ թե չեն կարդալու, այլ շատ են կարդալու», համոզված է գրադարանի փոխտնօրենը:

ԹԱՄԱՐ ՄԵԼՔՈՆՅԱՆ

«Մեծ սաղավարտի» առաջին դափնեկիրները հայտնի են

Մելբուռնում ավարտվեց թենիսի Ավստրալիայի բաց առաջնությունը, որն այս մրցաշրջանում «Մեծ սաղավարտ» մրցանակի շարքին դասվող առաջին մրցաշարն էր: Հայտնի դարձան մրցաշարի բոլոր դափնեկիրները: Տղամարդկանց մրցաշարում չեմպիոնի տիտղոսը վիճարկեցին ռուսաստանցի Մարատ Սաֆինն ու շվեյցարացի Ռոժե Ֆեդերերը: Մասնագետները եզրափակիչից առաջ բարձր էին գնահատում Ֆեդերերի հաղթելու հնարավորությունները: Եվ նրանք չսխալվեցին: Շվեյցարացի թենիսիստը համառ պայքարում, 3 խաղափուլում պարտության մատնեց Մարատ Սաֆինին (7-6, 6-4, 6-2): Հատկապես սուր մրցակցություն ծավալվեց առաջին խաղափուլում, որտեղ միայն թայ-բրեյքում Ֆեդերերին հաջողվեց հաստատել իր առավելությունը: Այդ հաղթանակի շնորհիվ Ֆեդերերն առաջին անգամ գլխավորեց թենիսիստների համաշխարհային դասակարգման ցուցակը, իսկ 2-րդ տեղում Մարատ Սաֆինն է: Նա զգալի առաջընթաց քայլ կատարեց նաեւ վերջին 52 շաբաթվա արդյունքներով դասակարգման ցուցակում՝ 86-րդ տեղից տեղափոխվելով 35-րդ հորիզոնական:

Հարկ է նշել, որ «Մեծ սաղավարտի» մրցաշարերում Ռոժե Ֆեդերերն իր 2-րդ հաղթանակը տոնեց: Անցյալ տարի նա հաղթող էր ճանաչվել ուիմբլդոնյան մրցաշարում: Ինչ վերաբերում է Սաֆինին, ապա նրա ելույթը եւս պետք է հաջող համարել: Չպետք է մոռանալ, որ Մարատն անցյալ մրցաշրջանում վնասվածքի պատճառով երկար ժամանակ կորտ դուրս չէր գալիս: Մելբուռնում նա կարողացավ հասնել մինչեւ եզրափակիչ՝ իր ճանապարհին պարտվելով այնպիսի փորձված ու տիտղոսակիր թենիսիստի, ինչպիսին Անդրե Աղասին է: Հաջող մրցելույթների շնորհիվ Մարատ Սաֆինն իրավունք ստացավ մասնակցելու Աթենքում կայանալիք օլիմպիական մրցաշարին:

Կանանց եզրափակիչը վերածվեց բելգիացի թենիսիստուհիներ Ժյուստին Էնենի եւ Կիմ Կլիյստերսի մրցավեճի: Հաջողությունն ուղեկցեց թենիսիստուհիների դասակարգման ցուցակի առաջատար Ժյուստին Էնենին, որը 1 ժամ 47 րոպեում հաղթեց իր մրցակցին (6-3, 4-6, 6-3): Հետաքրքրական է, որ անցյալ տարի բելգիացի այս երկու թենիսիստուհիների միջեւ կայացած եզրափակիչ 6 մրցախաղերից 4-ում հաղթել էր Ժյուստինը: Այս անգամ էլ նա իր բարձրության վրա գտնվեց: Վերջին մեկ տարվա ընթացքում 21-ամյա թենիսիստուհին «Մեծ սաղավարտի» մրցաշարերում իր 3-րդ հաղթանակը տոնեց: Անցյալ տարի Ժյուստինը հաղթող էր ճանաչվել Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի բաց առաջնություններում, իսկ Ուիմբլդոնում հասել էր մինչեւ կիսաեզրափակիչ:

Տղամարդկանց զուգախաղում 2-րդ տարին անընդմեջ հաղթողի կոչմանն արժանացան ֆրանսիացիներ Միշել Լլոդրան ու Ֆաբրիս Սանտորոն, որոնք եզրափակիչում հաղթեցին ամերիկացի Բոբ եւ Մայք Բրայան եղբայրներին (7-6, 6-3): Խառը զուգախաղում ռուսաստանցի Ելենա Բովինան, ընկերակցելով սերբ թենիսիստ Նենադ Զիմոնժիչին, եզրափակիչում պարտության մատնեց հանրահայտ թենիսիստուհի, 47-ամյա Մարտինա Նավրատիլովային եւ հնդիկ թենիսիստ Լեանդեր Պաեսին (6-1, 7-6): Հարկ է նշել, որ Ելենա Բովինան 2-րդ անգամ էր խառը զուգախաղում հանդես գալիս եզրափակիչում: 2002 թ. նա Ֆրանսիայի բաց առաջնությունում պարտություն էր կրել:

Կրամնիկը շահեց մրցախաղը

Ռուսաստանցի գրոսմայստեր Վլադիմիր Կրամնիկը միաժամանակյա խաղի սեանս անցկացրեց Գերմանիայի հավաքականի հետ, որի կազմում էին Ռոբերտ Հյուբները, Ռուստեմ Դաուտովը, Կլաուս Բիտոֆը եւ Քրիստոֆեր Լուցը: Պարտիաներն անցկացվում էին դասական շախմատի կանոններով: Կրամնիկին հաստատվել էր 160 րոպե, նրա մրցակիցներին՝ 120 րոպե: Մրցախաղում Կրամնիկը հաղթեց 2,5-1,5 հաշվով: Կրամնիկը սեւերով հաղթեց Հյուբներին, մնացած երեք պարտիաներում մրցակիցների հետ խաղաղ դաշն կնքեց:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում մրցախաղի գլխավոր հովանավոր «Դանեման» ֆիրման հայտարարել է, որ պատրաստ է կազմակերպել Կրամնիկ-Լեկո շախմատային մրցամարտը: Նախատեսվում է մրցախաղն անցկացնել շվեյցարական Բրիսագո քաղաքում այս տարվա սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 18-ը: Մրցախաղը բաղկացած կլինի 14 պարտիայից:

Նիկիտա Սիմոնյանը հեռացավ հավաքականից

Ռուսաստանի ֆուտբոլային միության փոխնախագահ Նիկիտա Սիմոնյանն այլեւս երկրի ազգային հավաքականի պետը չէ: 77-ամյա Նիկիտա Սիմոնյանը հրաժարվել է այդ պաշտոնից՝ պատճառաբանելով իր ուսերին ընկնող մեծ ծանրաբեռնվածությունն ու առողջական վիճակը: Հիշեցնենք, որ նա ՌԴ հավաքականի պետի պաշտոնը սանձնել էր անցյալ տարի, երբ ռուսների ընտրանին գլխավորեց Գեորգի Ցարցեւը:

«Արսենալի» ամենաթանկ ձեռքբերումը

Լոնդոնի «Արսենալն» իր պատմության մեջ ամենախոշոր գործարքը կատարեց: 35 մլն եվրոյով (20 մլն ֆունտ ստեռլինգ) թիմը գնել է Իսպանիայի հավաքականի եւ «Սեւիլիայի» 20-ամյա հարձակվող Խոսե Անտոնիո Ռեյեսին: Մինչ այդ, առավելագույն գումարը (13 մլն ֆունտ) ծախսվել էր ֆրանսիացի Սիլվեն Վիլտորին գնելու համար:

Ռեյեսը համարվում է իսպանական ֆուտբոլի ներկայիս երիտասարդ տաղանդավոր ֆուտբոլիստներից մեկը, որն իրեն հիանալի դրսեւորեց Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում: «Արսենալ» տեղափոխվելու առիթով նա իր ուրախությունն է արտահայտել, նշելով, որ հանդես գալով անգլիական թիմում, ուրախ է Արսեն Վենգերի հետ աշխատելու հնարավորությունից: Նա 4,5 տարով է պայմանագիր կնքել «Արսենալի» հետ: Ռեյեսի պայմանագրի ժամկետը «Սեւիլիայի» հետ կնքված էր մինչեւ 2010 թ.: Հենց դրանով էլ պայմանավորված է այն բարձր գինը, որ սահմանված էր վճարել «Արսենալն» իսպանացի ֆուտբոլիստի համար: Օրինակ, Դեւիդ Բեքհեմը «Ռեալին» ավելի էժան արժեցավ: Ինչեւէ, ոչ բոլոր լրատվամիջոցներն են արդարացնում «Արսենալի» նման քայլը: Որոշ լրագրողներ նշել են, որ Ռեյեսն իրեն չի արդարացնի «Արսենալում», եւ ակումբն անհարկի խոշոր գումարներ է ծախսել իսպանացի ֆուտբոլիստի համար: Ժամանակը ցույց կտա, թե որքանո՞վ են իրավացի նման պնդումները:

«Վերդերն» Այլտոնին փոխարինող է փնտրում

Ինչպես տեղեկացրել ենք, «Վերդերի» բրազիլացի հարձակվող Այլտոնը, որ ներկայումս 16 գնդակով գլխավորում է բունդեսլիգայի առաջնության լավագույն ռմբարկուների ցուցակը, մրցաշրջանի ավարտից հետո տեղափոխվելու է «Շալկե-04»: Ուստի արդեն այժմվանից թիմի ղեկավարությունն Այլտոնին փոխարինող է փնտրում: «Վերդերը» պատրաստվում է թիմ հրավիրել «Կայզերսլաուտերնի» եւ Գերմանիայի հավաքականի հարձակվող Միրոսլավ Կլոզեին: Վերջինս «Կայզերսլաուտերնում» է 1999 թ. եւ այդ ընթացքում անցկացրած 109 խաղում խփել է 43 գոլ: «Վերդերի» գլխավոր մարզիչ Թոմաս Շաֆը նշել է, որ Կլոզեն այն ֆուտբոլիստն է, որին կցանկանար ընդգրկել իր թիմում եւ նրա տեղափոխման համար գումար չի խնայի: Կլոզեն, որ ներկայումս թիմի կազմում Թուրքիայում ուսումնամարզական հավաքի մեջ է, առայժմ խաղաֆարտերը լրիվ չի բացում: Նա նշել է, որ ամռանը հեռանալու է թիմից, սակայն հայտնի չէ, թե ակումբներից որ մեկը կնախընտրի: Կլոզեն բանակցել է ինչպես բրեմենցիների, այնպես էլ այլ թիմերի ներկայացուցիչների հետ: Ամենայն հավանականությամբ, Կլոզեն վերջնական որոշում կկայացնի երկրորդ շրջանի առաջին չորս տուրերից հետո:

ԸՄԲՇԱՄԱՐՏ

Եւս երկու օլիմպիական ուղեգիր

Մինչ Աթենքում օլիմպիական խաղերի մեկնարկը մի շարք մարզաձեւերից կանցկացվեն վարկանիշային մրցաշարեր, որոնցում կխաղարկվեն համաշխարհային սպորտի այդ խոշորագույն սուգաստեսի ուղեգրերը: Օրերս Բրատիսլավայում նման մի մրցաշար անցկացրին ազատ ոճի ըմբիշները: Մրցակարգի համաձայն, յուրաքանչյուր քաշային կարգում լավագույն արդյունքի հասած 5 ըմբիշներն իրավունք էին ստանում հանդես գալու ամառանը Աթենքում կայանալիք օլիմպիական խաղերում: Հայաստանն այդ մրցաշարում ներկայացրին չորս ըմբիշներ՝ Մարտին Բերբերյանը (55 կգ), Սեւակ Բաղդասարյանը (60 կգ), Արշակ Հայրապետյանը (66 կգ) եւ Արա Գեւորգյանը (74 կգ): Մեր ըմբիշներից ամենահաջողը հանդես եկան եւ օլիմպիական ուղեգրեր նվաճեցին Մարտին Բերբերյանն ու աշխարհի նախկին չեմպիոն Արա Գեւորգյանը: Նրանք երկուսն էլ իրենց քաշային կարգում գրավեցին մրցանակային 3-րդ տեղը: Այսպիսով, Աթենքում հայ օլիմպիականների թիվը հասավ 11-ի:

Մինչ օլիմպիական խաղերի մեկնարկը վարկանիշային մրցաշարեր կանցկացվեն նաեւ այլ մարզաձեւերից, որոնց կմասնակցեն նաեւ Հայաստանի պատվիրակները: Հուսանք, որ այդ մրցաշարերում հայ մարզիկներն այլի կընկնեն հաջող մրցելույթներով՝ ավելացնելով օլիմպիականների թիվը:

Ֆուտբոլի օլիմպիական մրցաշարը կկայանա

ՖԻՖԱ-ի նախագահ Զեպ Բլաթերի եւ համաշխարհային հակադոպինգային գործակալության նախագահ Ռիչարդ Պաունդի միջեւ կայացած բանակցությունների արդյունքում Բլաթերը ստորագրել է հակադոպինգային կոդեքսը, որն ընդունվել էր անցյալ տարվա մայիսին: Հիշեցնենք, որ մինչ այդ ՖԻՖԱ-ն հրաժարվում էր հակադոպինգային կոդեքսի ստորագրումից՝ համաձայն չլինելով մի շարք դրույթների հետ: Իր հերթին Ռիչարդ Պաունդը հայտարարել էր, որ օլիմպիական խաղերում կընդգրկվեն այն մարզաձեւերը, որոնց միջազգային ֆեդերացիաները կստորագրեն կոդեքսը: Այսօրվա դրությամբ կոդեքսը դեռ չեն ստորագրել պրոֆեսիոնալ հեծանվորդների միության ներկայացուցիչները:

ՖԻՖԱ-ի եւ համաշխարհային հակադոպինգային գործակալության միջեւ հիմնական տարաձայնությունն այն էր, որ, ըստ այդ կոդեքսի, ցանկացած մարզիկ, որի արյան անալիզում արգելված խթանիչներ կհայտնաբերվեն, պետք է որակազրկվի երկու տարով: ՖԻՖԱ-ի կարծիքով, դա շատ խիստ պատիժ է: Սակայն Ռիչարդ Պաունդը հայտարարել է, որ մարզիկին ոչ թե միանգամից որակազրկում են, այլ յուրաքանչյուր դեպքում քննարկվում եւ առանձին որոշում է կայացվում: Ճիշտ է, հենց հակադոպինգային գործակալությունն է պահանջում «Մանչեսթր Յունայթեդի» ֆուտբոլիստ Ռիո Ֆերդինանդին երկու տարով որակազրկել: Բայց չէ՞ որ Ֆերդինանդը ոչ թե դոպինգ է օգտագործել, այլ պարզապես դոպինգ-ստուգում չէր անցել: Թեեւ Բլաթերի եւ Պաունդի միջեւ համաձայնություն ձեռք բերվեց, սակայն հակադոպինգային գործակալությունն իրեն իրավունք է վերապահում ՖԻՖԱ-ի ընդունած որոշումները վիճարկելու մարզական արբիտրաժային դատարանում: Ինչեւէ, կարեւորն այն է, որ Աթենքում կայանալիք օլիմպիական խաղերում ֆուտբոլն իր արժանի տեղը գրավի:

«Ատլետը» փրկեցին «Ռեալի» պատիվը

Բավական հետաքրքրական իրադարձություններ ծավալվեցին Իսպանիայի առաջնության 22-րդ տուրում: Դրամատիկ պայքարում անցավ միջին հորիզոնականներում ընթացող «Վալյադոլիդի» եւ առաջատարներից մեկի՝ Մադրիդի «Ռեալի» մրցավեճը: Առաջին խաղակեսից հետո դատի տերերը, շնորհիվ Օսկարի խփած 2 գոլերի, 2-0 հաշվով հաղթում էին ահեղ մրցակցին: Հարկ է նշել, որ «Ռեալի» կազմում բացակայում էին Ռոբերտո Կառլոսն ու Ռաուլ Բրավոն: Կառլոսին պատշտպանության ծախ թեւում փոխարինած Սանտյագո Սոլարին անհաջող կատարեց իր պարտականությունները եւ հենց նրա գոտուց էլ դատի տերերի երկու գոհերն ավարտվեցին Իկեր Կասիլյասի դարպասի գրավմամբ:

Ընդմիջումից հետո «Ռեալն» իրեն դրսեւորեց լավագույն կողմերով: Իրենց վարպետությամբ հատկապես աչքի ընկան ֆրանսիացի Զինեդին Զիդանն ու բրազիլացի Ռոնալդոն: Հենց այս երկու «աստղերի» ջանքերով էլ «Ռեալին» հաջողվեց ի վերջո ոչ միայն խուսափել պարտությունից, այլեւ խաղի ավելացված ժամանակում կորզել հաղթանակը: Նախ Զիդանը կրծատեց հաշվի տարբերությունը, ապա Ֆիգուն հստակ իրացրեց 11 մ հարվածը, իսկ վերջակետը դրեց Ռոնալդոն՝ խփելով իր 17-րդ գնդակը:

22 տուրից հետո «Ռեալը» 49 միավորով շարունակում է գլխավորել աղյուսակը: «Արխայական» ակումբին 2 միավորով զիջում է «Վալենսիան», որը հյուրընկալվելիս խոշոր՝ 6-1 հաշվով պարտության մատնեց «Մալագային»: Այդ խաղում 3 գոլ խփեց Օլիվեյրան: 3-րդ հորիզոնականը զբաղեցնող «Դեպորտիվոն» 1-0 հաշվով պարտության մատնեց «Սեւիլիային»: Տուրի մյուս հանդիպումների արդյունքներն են. «Բարսելոն»-«Ալբասետե»՝ 5-0, «Ռեալ սոսյեդադ»՝-«Ռասինգ»՝ 1-0, «Վիլյարեալ»-«Խոսանյոլ»՝ 0-1, «Մայորկա»-«Ատլետիկո»՝ 1-3, «Մուրսիա»-«Սարագոսա»՝ 1-0, «Բետիս»-«Սելթա»՝ 1-0, «Ատլետիկո»-«Օսասունա»՝ 1-1:

Այզերմանը գերազանցեց Լեմյեի գուցանիշը

«Դետրոյթի» հարձակվող Սթիվ Այզերմանը «Նյու Ջերսիի» հետ խաղում հոկեյի ազգային լիգայի պատմության մեջ իր հաշվին 1702-րդ միավորը գրանցեց՝ դառնալով գոլային փոխանցման հեղինակ: Այս ցուցանիշով նա գերազանցեց «Պիտսբուրգի» հարձակվող Մարիո Լեմյեին (1701 միավոր): Հոկեյի ազգային լիգայի պատմության մեջ խփած գոլերի եւ արդյունավետ փոխանցումների ընդհանուր հանակով լավագույնների ցուցակը գլխավորում է լեգենդար հոկեյիստ Ուեյն Գրեցկին՝ 2857 միավոր: Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցնում նաեւ Մարկ Մեսյեն՝ 1869, Գորդի Հոուն՝ 1850, Ռոն Ֆրենսիսը՝ 1778, Մարսել Դիոնը՝ 1771, Սթիվ Այզերմանը՝ 1702, Մարիո Լեմյեն՝ 1701, Ֆիլ Էսպոզիտոն՝ 1590, Ռեյ Բուրկը՝ 1579, Փոլ Կոֆին՝ 1531:

Վերոնշյալ խաղում եւս մեկ նշանակալից իրադարձություն տեղի ունեցավ: Բրետ Խալը մարզական իր կենսագրությունում 733-րդ գոլը խփեց եւ այս ցուցանիշով հոկեյի ազգային լիգայի լավագույն ռմբարկուների ցանկում զբաղեցնում է 3-րդ հորիզոնականը:

Էջը պատրաստեց
ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքով

Թեհրան կմեկնի ԱՄՆ կոնգրեսական պատվիրակություն

Ասֆի. «Ամերիկյան պատվիրակության ընդունելու ծրագիր չունենք»

Փենսիլվանիայից հանրապետական սենատոր Առլըն Սփեքտրը ամերիկյան «USA Today» օրաթերթին ասել է, որ Մ. Նահանգների կոնգրեսական պատվիրակություն է մեկնելու Իրան: Սա առաջին դեմքը կլինի 1979 թվականի իսլամական հեղափոխությունից հետո, երբ ամերիկյան պատգամավորական պատվիրակություն է ժամանում Թեհրան: Սենատոր Սփեքտրն ասել է, որ նախկին կոնգրեսականների Իրան այցելությունը, մինչեւ փետրվարի 11-ը, Թեհրան կմեկնի կոնգրեսականների խորհրդականների մի խումբ: «Իրանը ԱՄՆ-ի հետ հարաբերությունները բարելավելու պատրաստակամության որոշակի ազդանշաններ է տալիս: Այսօր հարաբերությունները վերանայելու լավ ժամանակներ են», ասել է Սփեքտրը:

1953 թվականից Մ. Նահանգների անմիջական մասնակցությամբ Իրանում իշխանությունից հեռացվեց վարչապետ Մոհամմադ Մոսադեղի կառավարությունը, որի փոխարեն, կրկին ամերիկացիների միջամտությամբ, գահ բարձրացավ շահ Մոհամմադ Ռեզա Փահլավին: 1979 թվականի իսլամական հեղափոխությունը տապալեց Փահլավիների դինաստիայի իշխանությունը, իսկ մի քանի ամիս անց նախկին ռազմավարական դաշնակիցներ Իրանը եւ Մ. Նահանգները խզեցին դիվանագիտական հարաբերությունները, ինչը շարունակվում է մինչեւ օրս:

Անցնող չորեքշաբթի երեկոյան Վաշինգտոնում Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի խոսնակ Դեննիս Հաստերթի գրասենյակում վեց կոնգրեսականներ ընդունել եւ զրույց են ունեցել ՄԱԿ-ում Իրանի դեսպան Մոհամմադ Ջավադ Զարիֆի հետ:

Պաշտոնական Թեհրանը երեկ հայտարարել է, որ Իրանն ամերիկյան պատվիրակություն հյուրընկալելու ծրագիր չունի: ԱԳՆ խոսնակ Ասֆին նշել է, որ կոնգրեսականների այցելության մասին տեղեկությունը, որ հայտնվել է ամերիկյան եւ եվրոպական մամուլում, չի համապատասխանում իրականությանը, հաղորդում է ԻՌՆԱ գործակալությունը: Ի դեմ, հունվարի սկզբներին Թեհրանը մերժել էր հանրապետական սենատոր Էլիզաբեթ Դոուլի Իրան այցելելու ցանկությունը, մինչդեռ դեկտեմբերի վերջերին Բամ քաղաքում տեղի ունեցած աղետալի երկրաշարժից հետո ընդունել էր ամերիկյան մարդասիրական օգնությունն ամերիկյան ռազմական ինքնաթիռներով:

Թեեւ արդեն 23 տարուց ավելի է, որ Թեհրանն ու Վաշինգտոնը խզել են դիվանագիտական կապերը, հատկապես վերջին տարիներին իսլամական հանրապետության եւ Մ. Նահանգների գաղտնի շփումները չեն ընդհատվում: Իրանա-ամերիկյան տարբեր մակարդակներով բանակցությունները ակտիվացան 2002 թվականից, երբ նախագահ Ջորջ Բուշը Իրաքի եւ Հյուսիսային Կորեայի հետ Իրանին դասեց այսպես կոչված «չարիքի առանցքում»:

2002-ի ապրիլին Իրանի խորհրդարանի արտաքին հարցերով հանձնաժողովի նախագահ Մոհսեն Միրդամադին հայտարարեց, որ Շվեյցարիայում եւ Կիպրոսում տեղի են ունեցել իրանա-ամերիկյան բանակցություններ մի քանի փուլերով, որոնց մասնակցել են երկու պետությունների արտաքին գերատեսչությունների բարձրաստիճան պաշտոնյաներ:

Ի դեմ, այդ օրերին բրիտանական «Ֆայնենշըլ թայմզը» գրեց, թե հեղափոխության առաջնորդ, կրոնապետ Ալի Խամենեին Իրանի անվտանգության ազգային խորհրդին հանձնարարել է ուսումնասիրել Իրանի եւ Միացյալ Նահանգների միջեւ բանակցությունները սկսելու հնարավորությունները:

Իրանի եւ Մ. Նահանգների միջեւ կապերի խզումից հետո երկու պետությունները միմյանց հանդեպ տարել են ընդգծված թշնամական քաղաքականություն: Վաշինգտոնը Թեհրանին մեղադրում է միջազգային ահաբեկչությունը պետական մակարդակով հովանավորելու, Իսրայելի հանդեպ թշնամական կեցվածք որդեգրելու, զանգվածային ոչնչացման զենքեր ձեռք բերելու, երկրի ներսում ժողովրդավարությունը եւ մարդու իրավունքները ոտնահարելու մեջ: Իր հերթին Թեհրանը Վաշինգտոնին է մեղադրում Իսրայելին մահմեդական աշխարհի դեմ գործողությունների հրահրելու, իսլամական հանրապետությանը տնտեսապես մեկուսացնելու փորձերի եւ մի շարք այլ մեղքերի մեջ:

Միացյալ Նահանգների մերձավորարեւելյան քաղաքականության կարեւորագույն բաղադրիչներից էր այսպես կոչված Նիքսոնի հիմնադրույթը, ըստ որի ամերիկյան ազդեցությունը տարածաշրջանում պահպանելու առումով կարեւորվում էր Իրան-Իրաք մշտական հակասությունը: 1980-ից Վաշինգտոնի հրահրումով Իրաքը հարձակվեց Իրանի վրա. պատերազմը շարունակվեց ութ տարի՝ խլելով մոտ 1 մլն մարդու կյանք երկու կողմերից:

1993-ին Վաշինգտոնն Իրանի հանդեպ որդեգրեց նոր «երկակի սանձահարման» քաղաքականություն, ինչը ենթադրում էր Թեհրանին տնտեսական եւ քաղաքական մեկուսացման մեջ պահել՝ նրան մեղադրելով միջազգային ահաբեկչությունը հովանավորելու, զանգվածային ոչնչացման զենքեր ձեռք բերելու մեջ: Երեք տարի անց Միացյալ Նահանգները հավանություն տվեց սենատոր Դ.Ամատոյի օրենքին, ըստ որի ամերիկյան եւ ոչ ամերիկյան այն ընկերությունները, որոնք Իրանի էներգակիրների ոլորտում տարեկան 20 մլն դոլարից ավելի ներդրում կանեն, կենթարկվեն տնտեսական պատժամիջոցների:

Անկախ այն բանից՝ ամերիկացի կոնգրեսականները կհասնեն Թեհրան, թե՝ ոչ, ակնկալվում է Իրանի հանդեպ Վաշինգտոնի քաղաքականության վերանայում: Մ. Նահանգներն արդեն հաստատվել է Իրաքում, եւ Նիքսոնի հիմնադրույթի կիրառումն արդեն ժամանակավրեպ է: Թերեւս ժամանակավրեպ է նաեւ «երկակի սանձահարման», դ.Ամատոյի քաղաքականությունը, քանի որ, չնայած դժվարություններին, Իրանը ոչ միայն չմեկուսացավ արտաքին աշխարհից, այլեւ դարձավ Եվրամիության հիմնական գործընկերներից: Ավելին, Իրանի դերը հարեւան Իրաքում եւ Աֆղանստանում կայունություն պահպանելու, ահաբեկչության դեմ պայքարի խնդիրներում ԱՄՆ-ի համար կարող է առաջնային պլան մղվել:

Մյուս կողմից, ակնկալել, թե Թեհրան-Վաշինգտոն հարաբերությունները մեկ կամ մի քանի այցով կարող են բարելավվել, իրատեսական չէ: Իրանի ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Հասան Ռոհանին «Փեյվանդ» թերթում ասել է, որ Թեհրան-Վաշինգտոն կապերը վերականգնելու նշաններ չկան, եւ «ԱՄՆ-ը պետք է որդեգրի մի քաղաքականություն, ինչը հնարավորություն կտա վերականգնելու հարաբերությունները»:

Թ. Ա.

Պլաստիկե քարե կուբան մեկնողների համար

2004 թ. սկզբից մերձավոր եւ հեռավոր արտասահմանից Կուբան աշխատելու մեկնող անձինք պարտավոր են ունենալ հատուկ պլաստիկե քարե: Կրասնոդարի երկրամասի ՆԳ գլխավոր վարչության ներգաղթի գործերի վարչության պետ Վլադիմիր Ցուկանովը Ռուսաստանի հարավի հայերի «Երկրամաս» թերթին տված հարցազրույցում հայտարարել է. «Առանց քարտի նրանք հիմա պարզապես չեն կարողանա աշխատել ոչ միայն Կուբանում, այլեւ առհասարակ Ռուսաստանում»:

Պլաստիկե հատուկ քարտեր մտցնելու որոշումը պայմանավորված է ամբողջ Ռուսաստանում աշխատող ներգաղթյալների տեղաշարժերի վերաբերյալ ի վերջո հստակ տեղեկություն ստանալու նպատակով: Ի դեմ, մասնագետների գնահատականների համաձայն, նոր փաստաթղթերն ըստ էության անհնար է կեղծել, հանգի իսկական պլաստիկե քարտը պատրաստված է հոլոգրամով եւ գծիկ-ծածկագրով:

Աշխատող ներգաղթյալների համար պլաստիկե քարտ ստանալու նպատակով գործատուն պետք է դիմում ներկայացնի ներգաղթի գործերի վարչություն եւ վճարի 3000 ռուբլի: Աշխատելու թույլտվության համար ինքը՝ ներգաղթյալը, իր հերթին վճարում է 1000 ռուբլի: Եթե պարզվի, որ օտարերկրացին աշխատում է առանց այդ թույլտվության, ապա նա կարող է արտաքսվել Ռուսաստանից, իսկ գործատուն՝ տուգանվել:

Պ. Ք.

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը Մայր տաճարի Դպրաց դասը (քառաձայն երկսեռ երգչախումբ) վերակազմավորելու նպատակով հայտարարում է մրցույթ, որ տեղի կունենա մարտ ամսին Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում:

Մրցույթին կարող են մասնակցել 20-38 տարեկան երգիչ-երգչուհիներ: Մրցույթի մասնակիցները պետք է լրացնեն հետեւյալ պահանջները.

ա) ինտոնացիա (ձայնի մաքրություն).

բ) գեղեցիկ տեմբր.

գ) ընթերցանություն թերթից.

դ) մեղեդային դարձվածքի հիշողություն եւ վերարտադրում:

Ցանկացողները մինչեւ սույն թվականի մարտի 20-ը Մայր Աթոռի կադրերի բաժին պետք է ներկայացնեն հետեւյալ նախնական փաստաթղթերը.

դիմում (որի ձեւն առկա է կադրերի բաժնում).

ինքնակենսագրություն.

լուսանկար 2 հատ (4x6).

դիպլոմի պատճեն կամ ներկա ուսումնական հաստատության կողմից տեղեկանք:

Մրցույթին մասնակցելու առնչությամբ լրացուցիչ տեղեկությունների համար հեռաձայնեք հետեւյալ հեռախոսահամարներով՝ 517-147, 517-277:

ՄԱՍԼՈ ՀԱՅՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դրամավարկային տեղեկատու

Հունվարի 23-29-ն ընկած ժամանակահատվածում դրամավարկային ցուցանիշները հետեւյալն էին.

Դրամական բազա, դրամական զանգված

Փողի բազան աճել է 1 մլրդ 255 մլն դրամով եւ հունվարի 29-ին կազմել 106 մլրդ 232 մլն դրամ: Զուտ արտաքին ակտիվները (առանց սեփականաշնորհման միջոցների) նվազել են 370 մլն դրամով, իսկ զուտ ներքին ակտիվներն աճել են 1 մլրդ 625 մլն դրամով:

Հունվարի 16-23-ն ընկած ժամանակահատվածում փողի զանգվածը նվազել է 6 մլրդ 138 մլն դրամով եւ հունվարի 23-ին կազմել 220 մլրդ 53 մլն դրամ (ընդգրկված են 19 բանկերի ցուցանիշները): Շրջանառության մեջ կանխիկ դրամը նախորդ շաբաթվա համեմատ նվազել է 1 մլրդ 93 մլն դրամով եւ կազմել 82 մլրդ 743 մլն դրամ: Դրամով ցպահանջ ավանդները նվազել են 4 մլրդ 292 մլն դրամով եւ կազմել 25 մլրդ 433 մլն դրամ: Ժամկետային, խնայողական եւ արտարժութային ավանդները նվազել են 753 մլն դրամով եւ կազմել 111 մլրդ 877 մլն դրամ: Արտարժույթով ավանդները նվազել են 601 մլն դրամով եւ կազմել 101 մլրդ 5 մլն դրամին համարժեք արտարժույթ: Ընդ որում, արտարժութային ցպահանջ ավանդները կազմել են 49 մլրդ 784 մլն դրամ (նախորդ շաբաթվա համեմատ նվազել են 963 մլն դրամով), ժամկետայինները՝ 51 մլրդ 221 մլն դրամ (աճը՝ 362 մլն դրամ):

Ֆինանսական շուկա

Հունվարի 23-29-ն ընկած ժամանակահատվածում տեղաբաշխվել է 500 մլն դրամի 52-շաբաթյա ՊՊ՝ 7.5335 տոկոս տարեկան եկամտաբերությամբ, եւ մարվել է 800 մլն դրամի 52-շաբաթյա ՊՊ՝ 14.8909 տոկոս տարեկան եկամտաբերությամբ:

Շաբաթվա ընթացքում կնքվել է 1.025.370.470 դրամի հակադարձ ռեպո-համաձայնագիր՝ տարեկան 7 տոկոս տոկոսադրույքով:

Նշված ժամանակահատվածում ԿԲ-ն ներգրավել է 1 մլրդ 500 մլն դրամի ավանդ՝ տարեկան 3.5 տոկոս տոկոսադրույքով, եւ մարել 4 մլրդ 700 մլն դրամի ավանդ՝ տարեկան 3.5 տոկոս տոկոսադրույքով:

Արտարժույթի շուկա

Հունվարի 23-29-ն ընկած ժամանակահատվածում ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամն արժեւորվել է 0.32 տոկոսով՝ 568.11 դրամից հասնելով 566.25 դրամի:

Նշված ժամանակահատվածում արժութային շուկայում իրականացվել են շուրջ 27,128 հազ. ԱՄՆ դոլարի առք ու վաճառքի գործարքներ, որոնց միջին կշռված փոխարժեքը կազմել է 569.23 դրամ:

Շաբաթվա ընթացքում ԿԲ-ն վաճառել է 1 մլն 50 հազ. ԱՄՆ դոլար՝ 566.25 դրամ փոխարժեքով:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

For Your Internal News of Armenia Log on to

www.azg.am

In Armenian Russian, English, and Turkish

Պահանջվում է վեբ-ադմինիստրատոր

Երեւանում անգլերեն եւ հայերեն հրատարակվող «Արմենիանաու» ինտերնետային շաբաթաթերթը՝ ArmeniaNow.com փնտրում է բարձրակարգ վեբ-ադմինիստրատորի:

Դիմորդից պահանջվում է.

- լինել պատասխանատու եւ վստահելի
- ունենալ ինտերնետային հրատարակության համար անհրաժեշտ հմտություններ
- տիրապետել խոսակցական անգլերենին (ցանկալի է՝ ազատ)
- հակում ունենալ ուսումնասիրելու կիբեռտարածային լրագրության անսահման հնարավորությունները:

Համապատասխան որակավորում ունեցող դիմորդները պետք է պատրաստ լինեն ներկայացնելու իրենց աշխատանքների նմուշները:

Տեղեկությունների համար զանգահարել 53-24-22 համարով:

(«Արմենիանաու» «Նոր ժամանակ» լրագրողների վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպության պարբերականն է):

ՀՀ Կենտրոնական բանկը 30.01.2004 թ. ժ. 9.00-ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	566.04	560.40	571.70
EUR	1	եվրո	705.74	701.50	710.00
RUR	1	ռուս. ռուբլի	19.87	18.70	21.10

Գովազդի համար զանգահարել՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 2. 02. 2004 Գինը՝ 100 դրամ